

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Գ Ն ՈՒ Մ Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն Վ Ե Ր Ա Ն Ա Յ Վ Ա Շ Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Սույն Համաձայնագրի կողմերը (այսուհետ՝ Կողմեր)

Ընդունելով պետական գնումների համար արդյունավետ բազմակողմանի շրջանակի անհրաժեշտությունը՝ նպատակ հետապնդելով հասնել միջազգային առևտրի առաջիկ ազատականացման և ընդլայնման և բարելավել այն վարելու համար շրջանակը,

Ընդունելով, որ պետական գնումներին առնչվող միջոցառումները չպետք է մշակվեն, ընդունվեն կամ կիրառվեն այնպես, որ հնարավորություն չեն տալիս պաշտպանել ազգային մատակարարողներին, ապրանքները կամ ծառայությունները, կամ խտրակետություն որվի օտարերկրյա մատակարարողների, ապրանքների կամ ծառայությունների միջև,

Ընդունելով, որ պետական գնումների համակարգի անբողջականությունը և կանխատեսելիությունը անբաժան են համրային ռեսուրսների արդյունավետ և գործուն կատարումից, Կողմերի ստատությունների արդյունքներից և բազմակողմ առևտրային համակարգի գործունեությունից,

Ընդունելով, որ սույն Համաձայնագրի շրջանակում ընթացակարգային պարտավորությունները պետք է բավականաչափ ճկուն լինեն հաշվի առնելու համար յուրաքանչյուր Կողմի հատուկ հանգամանքները,

Ընդունելով զարգացող երկրների, մասնավորապես՝ առավել բույլ զարգացած երկրների զարգացման, ֆինանսական և առևտրական կարիքները հաշվի առնելու անհրաժեշտությունը,

Ընդունելով պետական գնումներին առնչվող բաժանցիկ միջոցառումների, գնումները բաժանցիկ և անկողմնակալ իրականացնելու և շահերի բախումից ու կոռուպցիոն գործերակերպից խտաստիելու կարևորությունը՝ կիրառելի միջազգային գործիքների համաձայն, ինչպիսին է Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան,

Ընդունելով սույն Համաձայնագրի շրջանակում գնումների առնչությամբ էլեկտրոնային միջոցների օգտագործման և դրանց օգտագործումը խթանալու կարևորությունը,

Նպատակ ունենալով խթանալ սույն Համաձայնագրի ընդունումը և անդամակցությունը դրա անդամ չհամըխաացող ԱՀԿ անդամների կողմից,

Սույնով համաձայնեցին հետևյալի շուրջ:

Սույն Համաձայնագրի նպատակների համար՝

ա. Առևտրային ապրանքներ կամ ծառայություններ նշանակում է ապրանքների կամ ծառայությունների տեսակ, որն ընդհանուր առմամբ փանառվում կամ առևտրային շուկայում փանառքի համար առաջարկվում է ոչ պետական գնորդներին և սովորաբար ձեռք է բերվում նրանց կողմից ոչ պետական նպատակներով:

բ. Կոմիտե նշանակում է Պետական գնումների կոմիտե՝ հիմնադրված XXI Հողվածի 1-ին կետի համաձայն:

գ. Եինարարական ծառայություններ նշանակում է ծառայություն, որի նպատակն է ցանկացած եղանակով թաղարացիական կամ շինարարական աշխատանքների իրականացումը՝ հիմնված Միափորված ազգերի կազմակերպության Արտադրանքի մախնական կենտրոնական դասակարգչի (CPC) 51-րդ բաժին վրա:

դ. Երկիր տերմինը ներառում է ցանկացած առանձին մարտային տարածք, որը սույն Համաձայնագրի Կողմ է: Սույն Համաձայնագրի Կողմ հանդիսացող առանձին մարտային տարածքի դեպքում, երբ սույն Համաձայնագրում արտահայտությունը կոդիկեցվի «ազգային» տերմինով, այդ արտահայտությունը պետք է մեկնաբանվի որպես այդ մարտային տարածքին վերաբերող, եթե այլ բան մախատեսված չէ:

ե. Օր նշանակում է օրացուցային օր:

զ. Էլեկտրոնային անուրդ նշանակում է կրկնվող գործընթաց, որը ներառում է Էլեկտրոնային միջոցների օգտագործում մատակարարների կողմից նոր գների կամ նոր արժեքների ներկայացման նպատակով՝ գնահատման շախմախներին առնչվող մրցույթի բանակական ոչ գնային տարրերի համար, կամ երկուսն էլ միասին, ինչը հանդիսանում է մրցույթի դասակարգման կամ վերադասակարգման արդյունք:

է. Գրափոր կերպով կամ գրափոր նշանակում է բառերով կամ թվերով ցանկացած արտահայտություն, որը կարելի է կարդալ, վերաբառադրել և հետագայում փոխանցել: Ըյն կարող է ներառել էլեկտրոնային եղանակով փոխանցված և պահպանված տեղեկատվություն:

ը. Սահմանափակ մրցույթ նշանակում է գնումների այն մեթոդը, երբ պատվիրատուն կապ է հաստատում մատակարարի կամ մատակարարների հետ՝ իր ընտրությամբ:

թ. Միջոցառում նշանակում է նշված գնման առնչությամբ որևէ օրենք, կանոնակարգ, ընթացակարգ, վարչական ուղեցույց կամ պրակտիկա, կամ պատվիրատուի որևէ գործողություն:

ժ. Բազմակի օգտագործման ցուցակ նշանակում է այն մատակարարների ցուցակ, որոնց պատվիրատուն որոշել է այդ ցուցակում գրանցվելու համար պայմանները բավարարող, և որը պատվիրատուն մտադիր է օգտագործել ավելի քան մեկ անգամ:

ի. Լախատեսված գնումների ծանուցում նշանակում է պատվիրատուի կողմից հրապարակված ծանուցում, որով շահագրգիռ մատակարարները հրավիրվում են ներկայացնելու մասնակցության հայտ, մրցույթի հայտ կամ երկուսն էլ միասին:

լ. Օգնեք նշանակում է ցանկացած պայման կամ մախածեղություն, որը իրախատում է տեղական զարգացումը կամ բարեկալում է Կողմի վնասման հաշվեկշիռի հաշիվ-

ները, ինչպիսիք են՝ տեղական բաղադրիչի օգտագործումը, տեխնոլոգիաների լիցենզավորումը, ներդրումները, բարեօրային փոխանակումը և համանման գործադրությունները կամ պահանջը:

խ. **Քաջ մրցույթ** նշանակում է գնման մեթոդ, երբ բոլոր շահագրգիռ մատակարարները կաբող են մրցույթի հայտ ներկայացնել:

ծ. **Անձ** նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

կ. **Պատվիրատու** նշանակում է մարմին, որը սահմանվում է I Հավելվածի՝ Կողմին վերաբերող 1-ին, 2-րդ կամ 3-րդ Աղոյթներում:

հ. **Որակավորված մատակարար** նշանակում է մատակարար, որին պատվիրատուն ընդունում է, որպես մասնակցության պայմանները բավարարող:

ձ. **Ընտրողական մրցույթներ** նշանակում է գնման այն մեթոդը, երբ պատվիրատուի կողմից միայն որակավորված մատակարարներն են իրավիքվում ներկայացնելու մրցույթի հայտ:

դ. **Շասայություններ** տերմինը ներառում է շինարարական ծառայությունները, եթե աչք քան մախատեպած չէ:

ճ. **Ստանդարտ** նշանակում է պատկան մարմնի կողմից հաստատված փաստաթուղթ, որը նախատեսում է ապրանքների կամ ծառայությունների համար ընդհանուր և կրկնվող օգտագործում, կանոններ, ուղեցույցներ կամ բնութագրեր, կամ ամօշվող գործընթացներ և արտադրական մեթոդներ, որոնց հետ համապատասխանությունը պարտադիր չի համարվում: Այն կաբող է մակ ներատեղ կամ ամնշվել բացատապես տերմինաբանության, սիմվոլների, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջներին, որոնք կիրառվում են ապրանքի, ծառայության, գործընթացի կամ արտադրության մեթոդի նկատմամբ:

Մ. **Մատակարար** նշանակում է անձ կամ անձանց խումբ, որոնք տրամադրում կամ կաբող են տրամադրել ապրանքներ կամ ծառայություններ, և

յ. **Տեխնիկական առանձնահատկություն** նշանակում է մրցույթի հայտի պահանջներ, որոնք.

i. սահմանում են գնվելիք ապրանքի կամ ծառայությունների բնութագրերը՝ ներառյալ որակը, կատարողականը, անվտանգությունը և ծախսը կամ դրանց արտադրության կամ մատակարարման գործընթացները և մեթոդները, կամ

ii. վերաբերում են տերմինարանության, սիմվոլների, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջներին, ինչքանով, որ դրանք կիրառվում են ապրանքի կամ ծառայության նկատմամբ:

Յողված II Երջանակը և կիրառելիությունը

Համաձայնագրի կիրառումը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նշված գնման ամնշությամբ ցանկացած միջոցառման նկատմամբ, անկախ այն բանից, թե գնումն իրականացվում է բացատապես կամ մասամբ էլեկտրոնային եղանակով.

2. Սույն Համաձայնագրի նպատակների համար՝ նշված գնումներ նշանակում է պետական նպատակներից էլնելով գնումներ.

ա. ապրանքների, ծառայությունների կամ դրանց որևէ համակցության,

i. ինչպես սահմանված է I Հավելվածի յոթաբանչյուր Կողմին վերաբերող առդր-ներում, և

ii. գնված չեն առևտրային վաճառքի կամ վերավաճառքի նպատակով, կամ առևտրային վաճառքի կամ վերավաճառքի համար ապրանքների կամ ծառայությու-ների արտադրության կամ մատակարարման ժամանակ օգտագործելու համար,

բ. ցանկացած պայմանագրային եղանակով, այդ թվում՝ գնման, լիզինգի, և վարձա-կազման կամ ապառիկ վաճառքի՝ գնման կամ առանց դրա հնարավորության,

գ. որի համար արժեքը, ինչպես գնահատված է 6-ից 8-րդ կետերի համաձայն, հա-վասար է կամ գերազանցում է I Հավելվածի՝ Կողմին վերաբերող առդրներում նշված համապատասխան չեմը ծանուցման հրապարակման ժամանակ՝ համաձայն VII Հոդ-վածի,

դ. պատվիրատուի կողմից, և

ե. որը այլ ձևով հանված չէ 3-րդ պարբերության կիրառելիության շրջանակից կամ I Հավելվածի՝ Կողմի առդրներից:

3. Եթե այլ բան նախատեսված չէ I Հավելվածի՝ Կողմին վերաբերող առդրներով, սույն Համաձայնագիրը չի կիրառվում.

ա. հողի, առկա շենքերի կամ այլ անշարժ գույքի մեղքերիման կամ վարձակալու-րյան կամ դրանց նկատմամբ իրավունքների առնչությամբ,

բ. ոչ պայմանագրային համաձայնությունների կամ Կողմի կողմից տրամադրված աջակցության ցանկացած ձևի, ներառյալ՝ համագործակցության համաձայնագրերի, դրամաշնորհների, վարկերի, կապիտալի ինժուզիայի, երաշխիքների և հարկային խթանների նկատմամբ,

գ. ֆինանսական գործակալության և պահեստական ծառայությունների, կանոնա-կարգված ֆինանսական հաստատությունների լուծարման և կատավարման ծառայու-թյունների, կամ վաճառքի, պետական պարտքի, այդ թվում, վարկերի և պետական պար-տատմաների, մտրիակների և այլ ազահովումների մարման և բաշխման հետ կապված ծառայությունների գնման կամ մեղքերիման նկատմամբ,

դ. համրային ծառայության պայմանագրերի նկատմամբ,

ե. Իրականացված գնումների նկատմամբ.

i. միջազգային աջակցություն, ներառյալ զարգացման օգնություն տրամադրելու հատուկ նպատակի համար,

ii. գործերի տեղակայման կամ ստորագրող երկրների կողմից ծրագրի համատեղ ի-րականացման վերաբերյալ միջազգային համաձայնագրի հատուկ ընթացակարգի կամ պայմանի ներքո, կամ

iii. միջազգային կազմակերպության հատուկ ընթացակարգի կամ պայմանի ներքո, կամ միջազգային դրամաշնորհներով, վարկերով կամ այլ աջակցությամբ ֆինանսա-վորված, երբ կիրառելի ընթացակարգը կամ պայմանը անհամապատասխան կլինի սույն Համաձայնագրին:

4. Յտրաբանչոր Կողմ պետք է առանձնահատուկ նշի հետևյալ տեղեկատվությունը I Հավելվածի իր աղիքներում.

ա. 1-ին Աղիքում՝ կենտրոնական կառավարման մարմինները, որոնց գնումների համար կիրառվում է սույն Համաձայնագիրը,

բ. 2-րդ Աղիքում՝ ենթակենտրոնական իշխանության մարմիններ, որոնց գնումների համար կիրառվում է սույն Համաձայնագիրը,

գ. 3-րդ Աղիքում՝ բոլոր այլ մարմինները, որոնց գնումների համար կիրառվում է սույն Համաձայնագիրը,

դ. 4-րդ Աղիքում՝ ազդանքները, որոնց համար կիրառվում է սույն Համաձայնագիրը,

ե. 5-րդ Աղիքում՝ ծառայությունները, բացառությամբ շինարարական ծառայությունների, որոնց համար կիրառվում է սույն Համաձայնագիրը,

զ. 6-րդ Աղիքում՝ շինարարական ծառայությունները, որոնց համար կիրառվում է սույն Համաձայնագիրը, և

է. 7-րդ Աղիքում՝ այլ Ընդհանուր ծանոթություններ:

5. Այն դեպքում, եթե պատվիրատուն նշված գնման համառոտորեն պահանջում է I Հավելվածի՝ Կողմին վերաբերող աղիքներում չընդգրկված անձանցից գնում կատարել առանձնահատուկ պահանջների համաձայն, IV Հոդվածը կկիրառվի *mutatis mutandis* այդ պահանջներին նկատմամբ:

Գնահատում

6. Գնման արժեքը գնահատելիս, որոշելու համար, թե դրանք նշված գնումներն են, թե ոչ, պատվիրատուն պետք է.

ա. և տարանջատի գնումները առանձին գնումների և չլնտրի կամ օգտագործի գնման արժեքը գնահատելու համար գնահատման որոշակի մեթոդ՝ մտազրույթյան ունենալով անորոշագույն կամ մասնակի բացառել գնումը սույն Համաձայնագրի կիրառման շրջանակից, և

բ. ներստի գնման ամբողջ տևողության ընթացքում դրա գնահատված առավելագույն ընդհանուր արժեքը, անկախ այն բանից, թե պայմանագիրը մեկ կամ մի քանի մատակարարների հետ է կնքվել՝ հաշվի առնելով վարձատրության բոլոր ձևերը՝ ներառյալ.

i. պարզևավանդները, պատվովճարները, միջնորդավճարները և տոկոսավճարներ, և

ii. այն դեպքերում, երբ գնումները մախտոնում են տարբերակների հնարավորություն, նման տարբերակների ընդհանուր արժեքը:

7. Եթե գնման անհատական պահանջը հանգեցնի ազելի քան մեկ պայմանագրի կնքման կամ առանձին հատվածներով կնքվող պայմանագրերի (այսուհետ՝ կրկնվող պայմանագրեր), գնահատված առավելագույն ընդհանուր արժեքի հաշվարկը պետք է կնքվի հետևյալի վրա՝

ա. մախտոյ 12 ամիսների ընթացքում կամ պատվիրատուի մախտոյ ֆիսկալ տարում կնքված նմանատիպ ապրանքի կամ ծառայության կրկնվող պայմանագրերի, հնարավորության դեպքում, համապատասխանեցված արժեքի վրա՝ հաշվի առնելու համար

հաջորդող 12 ամիսների ընթացքում գնվելիք ապրանքի կամ ծառայության բանակի կամ արժեքի կանխատեսվող փոփոխությունները, կամ

բ. սկզբնական պայմանագրի կնքմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում կամ պատվիրատուի ֆինակա տարում կնքվելիք նեոնատիպ ապրանքի կամ ծառայության կրկնվող պայմանագրերի գնահատված արժեքի վրա:

8. Լիզինգի, վարձակալման կամ ապահով վաճառքի միջոցով ապրանքների կամ ծառայությունների գնումների կամ ընդհանուր գինը չսահմանված գնումների դեպքում, գնահատման հիմք կհանդիսանա հետևյալը՝

ա. որոշակի ժամկետով պայմանագրի դեպքում,

i. երբ պայմանագրի ժամկետը 12 ամիս է կամ դրանից պակաս՝ գնահատված ընդհանուր առավելագույն արժեքը պայմանագրի տևողության ընթացքում,

ii. երբ պայմանագրի ժամկետը գերազանցում է 12 ամիսը՝ գնահատված ընդհանուր առավելագույն արժեքը, այդ թվում՝ ցանկացած գնահատված մնացորդային արժեքը,

բ. երբ պայմանագիրն անորոշ ժամկետով է՝ գնահատված ամսական ժամանակահատվածում 48-ով, և

գ. երբ հատակ չէ, թե պայմանագիրը լինելու է «բաշակի ժամկետով՝ կկիրառվի (բ) ենթակետը:

Դրոյված III Անվտանգություն և ընդհանուր բացասություններ

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտող ցանկացած Կողմին՝ ձեռնարկելու որևէ գործուղություն կամ չբացահայտելու որևէ տեղեկատվություն, որը մա անհրաժեշտ է համարում իր անվտանգության էիննական շահերը պաշտպանելու համար՝ կազմված գների, գինավերքի կամ պատերազմական նյութերի գնման հետ կամ ազգային անվտանգության կամ ազգային պաշտպանության նպատակների համար անհրաժեշտ գնման հետ:

2. Վերապահուծով, որ նման միջոցառումները չեն կիրառվում այնպես, որ Կողմերի միջև կամայական կամ անադրաբացի խտրականության միջոց հանդիսանան, երբ նման պայմանները գերակշռում են, կամ հանդիսանան միջազգային անտերի բողարկված սահմանափակում, սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է խոչընդոտի որևէ Կողմին կիրառել կամ հարկադրել միջոցառումներ, որոնք.

ա. անհրաժեշտ են պաշտպանելու համար հասարակական բարքերը, կարգը կամ անվտանգությունը,

բ. անհրաժեշտ են պաշտպանելու համար մարդկային, կենդանական կամ բուսական կյանքը կամ առողջությունը,

գ. անհրաժեշտ են պաշտպանելու համար մտավոր սեփականությունը, կամ

դ. առնչված են ինքնապաշտպանություն ունեցող անձանց, բարեգործական հաստատությունների կամ բանտային աշխատանքի համար ապրանքներին կամ ծառայություններին:

Պողկած IV Ընդհանուր սկզբունքներ

Ռադիկալիզմի ընդհանուր սկզբունքներ

1. Նշված գնումներին վերաբերող ցանկացած միջոցառման առնչությամբ, յուրաքանչյուր Կողմ, Ֆերաույալ նրա պատվիրատուները, ցանկացած այլ Կողմի ապրանքներին և ծառայություններին, և ցանկացած այլ Կողմի մատակարարներին, ովքեր ցանկացած Կողմին առաջարկում են ապրանքներ և ծառայություններ, ամիսագաղ և անվերապահորեն կտրամադրի ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան այն պայմաններն են, որոնք Կողմը, Ֆերաույալ նրա պատվիրատուները, տրամադրում են.

ա. ազգային ապրանքներին, ծառայություններին և մատակարարներին, և

բ. ցանկացած այլ Կողմի ապրանքներին, ծառայություններին և մատակարարներին:

2. Նշված գնումներին վերաբերող ցանկացած միջոցառման առնչությամբ, Կողմը, Ֆերաույալ նրա պատվիրատուները, յսկետք է.

ա. տեղում էինմադրված մատակարարին տրամադրի պակաս բարենպաստ պայմաններ, քան մեկ այլ տեղում էինմադրված մատակարարի էլմելով օտարերկրյա մատակցության կամ սեփականության աստիճանից, կամ

բ. խաղաղամարտյուն դրսերի տեղական մատակարարի նկատմամբ այն էինմելով, որ կոմկրետ գնման համար այդ մատակարարի կողմից առաջարկված ապրանքները կամ ծառայությունները մեկ այլ Կողմի ապրանքներն ու ծառայություններն են համեկիսանում:

Էլեկտրոնային միջոցների օգտագործումը

3. Նշված գնումներն էլեկտրոնային եղանակով իրականացնելիս, պատվիրատուն պետք է.

ա. ապահովի, որպեսզի գնումներն իրականացվեն՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգեր և ծրագրային ապահովումներ, այդ թվում՝ տեղեկատվության նույնականացման և կողպելորնան ասումով, որոնք ընդհանուր ասմամբ, հասանելի են և փոխգործակցող այլ ընդհանուր ասմամբ հասանելի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և ծրագրային ապահովման հետ, և

բ. պահպանի մեխանիզմներ, որոնք ապահովում են մասնակցության և մրցույթների հայտերի անբողջականությունը, այդ թվում՝ ստացման ժամանակի հաստատումը և ոչ պատշաճ օգտագործման կամխարգելումը:

Գնման իրականացում

4. Պատվիրատուն իրականացնում է նշված գնումը թափանցիկ և անկողմնակալ մեղով, որը.

ա. համապատասխանում է սույն Համաձայնագրին՝ կիրառելով այնպիսի մեղովներ, ինչպիսիք են՝ բաց մրցույթը, ընտրանքային մրցույթը և ասմանակալ մրցույթը.

- բ. խուսափում է շահերի բախումից, և
- գ. կանխարգելում է կոռուպցիոն գործելակարգը:

Ծագման կանոնները

5. Նշված գնման նպատակով, Կողմը այլ Կողմից ներմուծված կամ մատակարարված ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ չպետք է կիրառի ծագման այնպիսի կանոններ, որոնք տարբերվում են այն ծագման կանոններից, որոնք Կողմը կիրառում է միևնույն ժամանակ առևտրի սովորական ընթացքում նույն Կողմից նույն ապրանքների կամ ծառայությունների ներմուծման կամ մատակարարումների նկատմամբ:

Օֆսեր

6. Նշված գնման ամուլությանը Կողմը, ներառյալ նրա պատվիրատուները, չպետք է փնտրի, հաշվի առնի, հարկադրի կամ կիրառի օֆսերային որևէ միջոց:

Գնմանը ոչ հատուկ միջոցառումներ

7. 1-ին և 2-րդ կետերը չպետք է կիրառվեն՝ ներմուծման կամ ներմուծմանն ամուլվող մաքսատուրքերի և ցանկացած այլ տեսակի վճարների նկատմամբ, նման տուրքերի և վճարների գանձման մեթոդների նկատմամբ, ներմուծման այլ կանոնակարգերի կամ ճևախանությունների և այն միջոցառումների նկատմամբ, որոնք, ազդում են ծառայությունների առևտրի վրա, քաջատուրքային նշված գնումները կատարելու միջոցառումները:

Չորրորդ V Ձարգացող երկրներ

1. Սույն Համաձայնագրին միանալու բանակցությունների ժամանակ և դրա իրականացման և կատարման ընթացքում, Կողմերը պետք է հատուկ դիտարկեն զարգացող երկրների և առավել թույլ զարգացած երկրների (այսուհետ՝ միասին՝ «զարգացող երկրներ», երբ այլ բան հատուկ սահմանված չէ) զարգացման, ֆինանսական և առևտրային կարիքները, գիտակցելով, որ դա կարող է էականորեն տարբերվել երկրից երկիր: Ինչպես նախատեսված է սույն Հոդվածում և համաձայն դիմումի, Կողմերը պետք է հատուկ և տարբերակված վերաբերմունք ցուցաբերեն.

ա. առավել թույլ զարգացած երկրներին, և

բ. ցանկացած այլ զարգացող երկրի, այն դեպքում և որքանով, այդ հատուկ և տարբերակված վերաբերմունքը բավարարում է դրա զարգացման կարիքներին:

2. Զարգացող երկրի կողմից սույն Համաձայնագրին միանալուց հետո, յուրաքանչյուր Կողմ պետք է անմիջապես այդ երկրի ապրանքներին, ծառայություններին և մատակարարներին տրամադրի առավել բարենպաստ պայմաններ, որոնք Կողմը, 1 Հավելվածի իր առդրիների համաձայն տրամադրում է սույն Համաձայնագրի ցանկացած այլ Կողմին՝ Կողմի և զարգացող երկրի միջև բանակցված պայմաններով՝ սույն Համաձայ-

նագրի շրջանակում հնարավորությունների համապատասխան հաճախակազույթումը պահպանելու նպատակով:

3. Ջարգացող երկիրը, ելնելով իր զարգացման կարիքներից և Կողմերի համաձայնությամբ, կարող է ընդունել կամ պահպանել հետևյալ անցումային միջոցառումներից մեկը կամ մի քանիսը՝ անցումային շրջանում և I Հավելվածի իրեն վերաբերող համապատասխան առիթրնեղում սահմանված ժամանակացույցի համաձայն, և դրանք կիրառել այնպես, որ խտրակամություն չդրվի այլ Կողմերի միջև.

ա. գների նախապատվության ծրագիր, այն պայմանով, որ ծրագրից.

i. նախապատվություն է տալիս միայն մրցույթի այն մասին, որը ներառում է նախապատվությունը կիրառող զարգացող երկրի ծագման ապրանքները կամ ծառայությունները, կամ այլ զարգացող երկրի ծագում ունեցող ապրանքներն ու ծառայությունները, որոնց համար նախապատվություն կիրառող զարգացող երկիրը, նախապատվության համաձայնագրի ուժով, պարտավորություն ունի տրամադրել ազգային վերաբերմունք, պայմանով, որ, երբ այլ զարգացող երկիրը սույն Համաձայնագրի Կողմ է, նման վերաբերմունքը կենթարկվի Կոմիտեի ամբողջած բոլոր պայմաններին, և

ii. քաֆանցիկ է, և նախապատվությունն ու գնումներում դրա կիրառումը հստակորեն նկարագրված են նախատեսված գնման ժամուցման մեջ,

բ. ռֆտեր՝ պայմանով, որ ռֆտերի հարկադրման որևէ փոփոխություն կամ դիտարկումը, հստակորեն նշված է նախատեսված գնման ժամուցման մեջ,

գ. հատուկ մարմինների կամ հատվածների փոխալին համալրում, և

դ. չեն, որն ավելի բարձր է, քան իր մշտական չենը:

4. Սույն Համաձայնագրին միանալու բանակցությունների ընթացքում Կողմերը կարող են համաձայնել հետաձգել միացող զարգացող երկրի կողմից սույն Համաձայնագրի որևէ հատուկ պարտականության կիրառումը, բացառությամբ IV Հոդվածի I-ին կետի (բ) ենթակետի, մինչև այլ երկիրը իրականացնում է պարտականությունը: Իրականացման ժամանակահատվածը լինում է.

ա. առավել քույլ զարգացած երկրի համար՝ սույն Համաձայնագրին անդամակցելուց հինգ տարի հետո, և

բ. ցանկացած այլ զարգացող երկրի համար՝ միայն հատուկ պարտականությունը իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը, և չպետք է գերազանցի երեք տարին:

5. Ծանկացած զարգացող երկիր, որը 4-րդ կետի շրջանակներում բանակցել է պարտականության իրականացման ժամանակահատվածի համար, պետք է I Հավելվածի իր 7-րդ Աղկիրում նշի համաձայնեցված իրականացման ժամանակահատվածը, հատուկ պարտականությունը, որի համար սահմանվել է իրականացման ժամանակահատված և ցանկացած միջանկյալ պարտականություն, որը մա համաձայն է կատարել իրականացման ժամանակահատվածի ընթացքում:

6. Ջարգացող երկրի համար սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո Կոմիտեն, զարգացող երկրի դիմումով, կարող է.

ա. երկարաձգել անցումային շրջանը 3-րդ կետի շրջանակներում ընդունված կամ պահպանված միջոցառման համար, կամ 4-րդ կետի շրջանակում բանակցված ցանկացած իրականացման ժամանակահատվածը, կամ

բ. հաստատել նոր անցումային միջոցառման ընդունումը 3-րդ կետի շրջանակն-

յում՝ հատուկ հանգամանքներում, որոնք նախատեսված չեն եղել անդամակցության ընթացքում:

7. Ձարգացող երկիրը, որ բանակցել է անցումային միջոցառումը 3-րդ կամ 6-րդ կետերի շրջանակներում, իրականացնան ժամանակահատվածը՝ 4-րդ կետի շրջանակում կամ ցանկացած երկարած գում՝ 6-րդ կետի շրջանակում, պետք է անցումային ժամանահատվածում կամ իրականացնան ժամանակահատվածում այնպիսի քայլեր ձեռնարկի, որոնք կարող են անհրաժեշտ լինել մինչև նման որևէ ժամանակահատվածի ավարտը սույն Համաձայնագրին համապատասխանությունն ապահովելու համար: Ձարգացող երկիրը պետք է անհապաղ ծանուցի Կոմիտեին նման քայլի մասին:

8. Կողմերը պետք է պատշաճ կերպով հաշվի առնեն զարգացող երկրի կողմից ներկայացված՝ սույն Համաձայնագրին տվյալ երկրի անդամակցության կամ դրա իրականացման ամենուրեք սեփանիկական համագործակցության և կարողությունների զարգացման համար դիմումը:

9. Կոմիտեն կարող է մշակել ընթացակարգեր սույն Հոդվածի իրականացման համար: Նման ընթացակարգերը կարող են ներառել 6-րդ կետի շրջանակում դիմումների վերաբերյալ որոշումների քվեարկության համար դրույթներ:

10. Կոմիտեն պետք է վերանայի սույն Հոդվածի գործունեությունն ու արդյունավետությունը յուրաքանչյուր երեք տարին մեկ:

Դոդված VI Գնումների համակարգի մասին տեղեկատվություն

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է.

ա. անհապաղ հրապարակի նշված գնմանն առնչվող ցանկացած օրենք, կանոնակարգ, դատական որոշում, ընդհանուր կիրառման վարչական որոշում, օրենքով կամ կանոնակարգով սահմանված և ծանուցումներում կամ մրցութային փաստաթղթերում հղումով ներառված ստանդարտ պայմանագրայինի դրույթ և ընթացակարգ, և դրանց որևէ փոփոխություն պաշտոնապես որոշված էլեկտրոնային կամ թղթային միջոցով, որն ունի լայն տարածում և մնում է հասարակությանը հեշտությամբ հասանելի.

բ. ցանկացած կողմի տրամադրի այս հարցով քացաարություն՝ վերջինիս դիմումի կիման վրա:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է բլի հետևյալը.

ա. II Հավելվածում՝ էլեկտրոնային կամ թղթային միջոցը, որում Կողմը հրապարակում է I-ին կետում նկարագրված տեղեկատվությունը,

բ. III Հավելվածում՝ էլեկտրոնային կամ թղթային միջոցը, որում Կողմը հրապարակում է VII Հոդվածով, IX Հոդվածի 7-րդ կետով և XVI Հոդվածի 2-րդ կետով պահանջվող ծանուցումները, և

գ. IV Հավելվածում՝ էլեկտրոնային կայքի հասցեն կամ հասցենները, որտեղ Կողմը հրապարակում է.

i. իր գնման վիճակագրությունը՝ XVI Հոդվածի 5-րդ կետի համաձայն, կամ

ii. կնքած պայմանագրերին առնչվող իր ծանուցումները՝ XVI Հոդվածի 6-րդ կետի համաձայն:

3. Յուրաքանչյուր Կողմ պետք է Կոմիտեին անհապաղ ծանուցի II, III կամ IV Հա-

վելվածներում թվարկված Կողմի տեղեկատվության մեջ կատարված ցանկացած փոփոխության մասին:

Հոդված VII Ծանուցումներ

Նախատեսված գնման մասին ծանուցում

1. Յուրաքանչյուր նշված գնման համար պատվիրատուն պետք է հրապարակի նախատեսված գնման մասին ծանուցում III Հավելվածում թվարկված համապատասխան թրթռային կամ էլեկտրոնային միջոցով՝ բացառությամբ XIII Հոդվածով նկարագրված հանգամանքների: Այդ միջոցը պետք է լայնորեն տարածվի և նման ծանուցումները պետք է մնան նեշտությամբ հասանելի համրության համար, առնվազն մինչև ծանուցման մեջ նշված ժամանակահատվածի ավարտը: Ծանուցումները պետք է.

ա. 1-ին Առօրյով նշված պատվիրատուների համար՝ հասանելի լինեն անվճար էլեկտրոնային եղանակով միակ հասանելիության կետի միջոցով, առնվազն III Հավելվածում սահմանված նվազագույն ժամանակահատվածով, և

բ. 2-րդ կամ 3-րդ Առօրյաներով նշված պատվիրատուների համար՝ էլեկտրոնային միջոցով հասանելիության դեպքում, տրանսպրզիեն, առնվազն, էլեկտրոնային կայքի հղումների միջոցով, որոնք հասանելի են անվճար:

Կողմերը, այդ թվում՝ 2-րդ կամ 3-րդ Առօրյաներով նշված նրանց պատվիրատուները, բաջալերվում են անվճար հրապարակելու իրենց ծանուցումները էլեկտրոնային եղանակով՝ միակ հասանելիության կետով:

2. Եթե այլ բան սահմանված չէ սույն Հանձնառնագրով, նախատեսված գնման յուրաքանչյուր ծանուցում պետք է ներառի.

ա. պատվիրատուի անունն ու հասցեն և այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ պատվիրատուի հետ կապ հաստատելու և գնման ու դրա արժեքի ու վճարման պայմանների վերաբերյալ բոլոր համապատասխան փաստաթղթերը ձեռք բերելու համար, եթե այդպիսիք առկա են,

բ. գնման նկարագրությունը, այդ թվում՝ զնվելիք ապրանքի կամ ծառայությունների բնույթն ու քանակը, իսկ, եթե քանակը հայտնի չէ, կանխատեսվող քանակը,

գ. կրկնվող պայմանագրերի համար, ենթավորության դեպքում, նախատեսված գնման հաջորդ ծանուցումների ժամանակացույցի պլանավորումը,

դ. ցանկացած տարբերակների նկարագրությունը,

ե. ապրանքների կամ ծառայությունների մատակարարման ժամանակացույցը կամ պայմանագրի տևողությունը,

զ. կիրառվելիք գնման մեթոդը և արդյոք այն ներառելու է քանակցություն կամ էլեկտրոնային աճուրդ.

է. եթե կիրառելի է, ապա գնմանը մասնակցելու համար հայտերի ներկայացման հասցեն և վերջնաժամկետը,

ը. մրցույթների հայտերի ներկայացման հասցեն և վերջնաժամկետը,

թ. այն լեզուն կամ լեզուները, որոնցով կարող են ներկայացվել մրցույթների կամ

մասնակցության հայտերը, եթե դրանք կարող են ներկայացվել պատվիրատուի Կողմի պետական լեզվից բացի այլ լեզվով:

ժ. մատակարարների մասնակցության համար ցանկացած պայմանների ցանկը և համառոտ նկարագրությունը, այդ բվում՝ մատակարարների կողմից դրա առնչությամբ տրամադրվելիք հասույի փաստաթղթեր կամ վկայագրեր ներկայացնելու որևէ պահանջ, եթե միայն նման պահանջները չեն ներառվում մրցութային փաստաթղթերում, որոնք հասանելի են բոլոր հետաքրքրված մատակարարներին նախատեսված գնման ծանուցման հետ միաժամանակ:

ի. այն դեպքում, եթե, IX Հոդվածի համաձայն, պատվիրատուն մտադիր է ընտրել մրցութին հրավիրվելիք պահվաճորժան մատակարարների սահմանափակ քանակ, այն յափանժիչները, որոնք կօգտագործվեն նրանց ընտրելու համար, և, ըստ անհրաժեշտության, մատակարարների քանակի ցանկացած սահմանափակումը, որոնք կբոյլա-տրվեն մասնակցել մրցոյթին, և

լ. նշում, որ գնումը սոյն Համաժայնագրի կիրառելիության շրջանակում է:

Անժիտի ծանուցում

3. Նախատեսված գնման յուրաքանչյուր դեպքում, նախատեսված գնման ծանուցման հրապարակման հետ միաժամանակ, պատվիրատուն պետք է հրապարակի հեշտ հասանելի ամփոփ ծանուցում ԱՀԿ-ի լեզուներից մեկով: Անժիտի ծանուցումը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

ա. գնման առարկան,

բ. մրցոյթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը կամ, եթե կիրառելի է, գնմանը մասնակցելու կամ քազմակի օգտագործման ցուցակում ընդգրկվելու համար հայտերի ներկայացման ցանկացած վերջնաժամկետը, և

գ. հասցեն, որտեղից գնմանն առնչվող փաստաթղթերը կարող են հայցվել:

Պլանավորված գնման ծանուցում

4. Պատվիրատուները խրախուսվում են հրապարակելու III Հավելվածով թվարկված համապատասխան թրջային կամ էլեկտրոնային կրիչով, հնարավորինս ջուտ յուրաքանչյուր ֆինակտ տարում, իրենց ապագա գնումների պլանների վերաբերյալ ծանուցում (այստեղիս՝ պլանավորված գնման ծանուցում): Պլանավորված գնման ծանուցումը պետք է ներառի գնման առարկան և նախատեսված գնման ծանուցման հրապարակման պլանավորված ամսաթիվը:

5. 2-րդ կամ 3-րդ Առդիրներում նշված պատվիրատուն կարող է կիրառել պլանավորված գնման ծանուցումը՝ որպես նախատեսված գնման ծանուցում, պայմանով, որ պլանավորված գնման ծանուցումը ներառում է 2-րդ կետում նշված առավելագոյն տեղեկատվություն, որը հասանելի է մատակարարի համար, և հայտաբերություն, որ հետաքրքրված մատակարարները պետք է գնման առնչությամբ իրենց հետաքրքրվածությունն աբտահայտեն պատվիրատուին:

Չողված VIII Մասնակցության պայմաններ

1. Պատվիրատուն պետք է սահմանափակի զեմանը մասնակցության ցանկացած պայմանները նրանց համար, ովքեր էական դեր ունեն երաշխավորելու, որ մատակարարն ունի իրափական և ֆինանսական հնարավորություններ և առևտրային ու տեխնիկական կարողություններ՝ համապատասխան զեմաները իրականացնելու համար:

2. Մասնակցության համար պայմաններ սահմանելիս պատվիրատուն.

ա. չպետք է ներկայացնի այնպիսի պայման, որ զեմանը մասնակցելու համար մատակարարը պետք է տվյալ Կողմի պատվիրատուից նախկինում ստացած լինի մեկ կամ մի քանի պայմանագրեր, և

բ. կարող է պահանջել նախկինում ձեռք բերած համապատասխան փորձ, երբ դա էական է զեման պահանջների բավարարելու համար:

3. Գնահատելու համար, բն աղյուք մատակարարը բավարարում է մասնակցության պայմանները, պատվիրատուն.

ա. պետք է զննատի մատակարարի ֆինանսական հնարավորությունները և առևտրային և տեխնիկական կարողությունները՝ ելնելով մատակարարի րիզմես գործունեությունից պատվիրատուի Կողմի տարածքում կամ տարածքից դուրս, և

բ. պետք է իր գնահատումը հիմնի այն պայմանների վրա, որոնք պատվիրատուն նախատես ևչել է ծանուցումներում կամ մրցութային փաստաթղթերում:

4. Հիմնավոր ապացույցի առկայության պարագայում Կողմը, այդ թվում՝ իր պատվիրատուն, կարող է բացառել մատակարարին հետևյալ հիմքերով.

ա. սնանկություն,

բ. կեղծ հայտարարագրեր,

գ. ցանկացած առարկայական պահանջի կամ նախկին պայմանագրով կամ պայմանագրերով ստանձնած պարտավորության կատարման հարցում էական կամ հետևողական թերացում,

դ. լուրջ հանցագործությունների կամ այլ լուրջ իրավախախտումների համար վերցնական դատական վճիռներ,

ե. մասնագիտական վատ վարքագիծ կամ գործողություններ կամ բացբողումներ, որոնք բացասաբար են անդադարտնում մատակարարի առևտրային անբողջականության վրա, կամ

զ. հարկ վճարելու անկարողություն:

Չողված IX Մատակարարների որակավորում

Գրանցման համակարգեր և որակավորման ընթացակարգեր

1. Կողմը, այդ թվում՝ իր պատվիրատուները, կարող է ներդնել մատակարարի գրանցման համակարգ, որի համաձայն հետաքրքրված մատակարարներից պահանջվում է գրանցվել և տրամադրել որոշակի տեղեկատվություն:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ.

ա. իր պատվիրատուների ջանքեր գործադրեն նվազեցնելու համար տարբերությունները որակավորման իրենց ընթացակարգերում, և

բ. երբ պատվիրատուները ներդնում են գրանցման համակարգ, նրանք ջանքեր գործադրեն նվազեցնելու համար տարբերությունների իրենց գրանցման համակարգերում:

3. Կողմը, այդ թվում՝ իր պատվիրատուները, չպետք է ընդունի կամ կիրառի որևէ գրանցման համակարգ կամ որակավորման ընթացակարգ մյուս Կողմի մատակարարների կողմից իր գնումներում ժամանակուրյան համար անհարկի խոչընդոտներ ստեղծելու նպատակով կամ ազդեցությամբ:

Ընտրանքային մրցույթներ

4. Այն դեպքում, երբ պատվիրատուն նախատեսում է կիրառել ընտրանքային մրցույթ, ապա նա պետք է.

ա. նախատեսված գնման ծանուցման մեջ ներառի VII Հոդվածի 2-րդ կետի (ա), (բ), (գ), (դ), (ե), (զ) և (յ) ենթակետերում սահմանված տեղեկատվությունը և հրավիրի մատակարարներին ներկայացնել մասնակցության հայտ, և

բ. մրցույթի ժամանակահատվածի մեկնարկի պահին տրամադրի ամփաօմ VII Հոդվածի 2-րդ կետի (գ), (դ), (ե), (զ) և (թ) ենթակետերում նշված տեղեկատվությունը որակավորված մատակարարներին, որոնց նա ծանուցում է, ինչպես սահմանված է XI Հոդվածի 3(բ) կետով:

5. Պատվիրատուն պետք է բոլոր որակավորված մատակարարներին թույլատրի մասնակցել կոնկրետ գնմանը, այլապես պատվիրատուն նախատեսված գնման ծանուցման մեջ պետք է նշի մրցույթի թույլատրվելիք մատակարարների քանակի սահմանափակ լինելու և սահմանափակ թվով մատակարարներ ընտրելու չափանիշների մասին:

6. Եթե մրցույթի փաստաթղթերը հանրոքեն հասանելի չեն 4-րդ կետում նշված ծանուցման եղապարակման օրվանից, ապա պատվիրատուն պետք է ապահովի, որ տվյալ փաստաթղթերը միաժամանակ հասանելի լինեն 5-րդ կետի համաձայն ընտրված բոլոր որակավորված մատակարարներին:

Քազմակի օգտագործման ցուցակներ

7. Պատվիրատուն կարող է վարել մատակարարների քազմակի օգտագործման ցուցակներ՝ պայմանով, որ ցուցակում ներառվելու համար հետաքրքրված մատակարարներին հրավիրող ծանուցումը պետք է.

ա. հրապարակվի ամենամյա կտրվածքով, և

բ. եթե հրապարակվում է էլեկտրոնային եղանակով, ապա մշտապես պետք է հասանելի լինի III Հավելվածում սահմանված կրիչով:

8. 7-րդ կետում նախատեսված ծանուցումը պետք է ներառի.

ա. այն ապրանքների կամ ծառայությունների նկարագիրը կամ դրանց դատակարգումները, որոնց համար ցուցակը կարող է օգտագործվել,

բ. մասնակցության պայմանները, որոնք պետք է բավարարեն մատակարարները

ցուցակում ընդգրկվելու համար, և այն մերժելնը, որոնք պատվիրատուն օգտագործելու է առուգելու համար՝ արդյո՞ք մատակարարը բավարարում է պայմաններին,

գ. պատվիրատուի անունն ու հասցեն և պատվիրատուի հետ կապ հաստատելու և ցուցակին առնչվող բոլոր համապատասխան փաստաթղթերը ձեռք բերելու համար այլ ամիսաժեշտ տեղեկատվություն,

դ. ցուցակի փափերականության ժամկետը և դրա վերամայման կամ դադարեցման ձևերը, կամ, եթե փափերականության ժամկետ սահմանված չէ, ապա այն մերժող մասին նշում, որով կժամուցվի ցուցակի օգտագործման դադարեցման մասին, և

ե. նշում, որ ցուցակը կարող է օգտագործվել սույն Հանձնաձյանագրով նախատեսված գնումների համար:

9. Չմայած 7-րդ կետի, երբ բազմակի օգտագործման ցուցակը փափերական է լինելու երեք տարի կամ պակաս ժամկետով, պատվիրատուն կարող է հրապարակել 7-րդ կետով սահմանված ծանուցումը միայն մեկ անգամ, ցուցակի փափերականության ժամկետի սկզբից, պայմանով, որ ծանուցումը.

ա. նշում է փափերականության ժամկետը և որ հետագա ծանուցումները չեն հրապարակվելու, և

բ. հրապարակվում է էլեկտրոնային եղանակով և շարունակաբար հասանելի է դրա փափերականության ժամկետի ընթացքում:

10. Պատվիրատուն պետք է բուլլետոնի մատակարարներին ցանկացած ժամանակ դիմել բազմակի օգտագործման ցուցակում ներառվելու համար և պետք է ցուցակում ներառի բոլոր որակավորված մատակարարներին ողջամիտ կարճ ժամկետում:

11. Այն դեպքում, եթե բազմակի օգտագործման ցուցակում չընդգրկված մատակարարը ներկայացնում է բազմակի օգտագործման ցուցակի հիման վրա գնման ժամանակակցելու հայտ և պահանջվող բոլոր փաստաթղթերը XI Հոդվածի 2-րդ կետում սահմանված ժամկետներում, ապա պատվիրատուն պետք է քննի հայտը: Պատվիրատուն չպետք է մերժի մատակարարի դիտարկումը գնման առնչությամբ այն հիմքով, որ նա բավարար ժամանակ չունի դիմումը քննելու համար, եթե միայն, բացառիկ դեպքերում, երբ եղևելով գնման բարդությունից, պատվիրատուն ի վիճակի չէ իրականացնել հայտի դիտարկումը մրցույթի հայտերի ներկայացան համար սահմանված ժամկետներում:

Առդիք 2 և Առդիք 3 Մարտիններ

12. 2-րդ կամ 3-րդ առդիրների չրջանակում պատվիրատուն կարող է բազմակի օգտագործման ցուցակում ներառելու նպատակով հայտ ներկայացնելու համար մատակարարներին հրավիրելու ծանուցումը օգտագործել որպես նախատեսված գնման ծանուցում, պայմանով, որ.

ա. ծանուցումը հրապարակվի 7-րդ կետի համաձայն և ներառի 8-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, որպես VII Հոդվածի 2-րդ կետով պահանջվող առավելագույն տեղեկատվություն, որը հասանելի կլինի, և հայտարարություն այն մասին, որ այն նախատեսված գնման ծանուցում է կամ, որ միայն բազմակի օգտագործման ցուցակում ընդգրկված մատակարարներն են ստանալու բազմակի օգտագործման ցուցակով գնման հետագա ծանուցումներ, և

բ. մարտինը անհապաղ տվյալ գնման առնչությամբ հետաքրքրություն արտահայ-

տած մատակարարներին է տրամադրում բավարար տեղեկատվություն՝ որը բույլ տա նրանց գնահատել իրենց գնմանը մասնակցելու հնարաքրքրվածությունը, այդ թվում՝ VII Հոդվածի 2-րդ կետով պահանջվող ամբողջ մնացած տեղեկատվությունը, այնքանով, որքանով նման տեղեկատվությունը հասանելի է:

13. 2-րդ կամ 3-րդ առդրոններում ներառված պատվիրատուն կաշտ է 10-րդ կետի համաձայն բազմակի օգտագործման ցուցակում ներառվելու համար հայտ ներկայացրած մատակարարին բույլատրել մասնակցել տվյալ գնմանը՝ այն դեպքում, երբ պատվիրատուն բավարար ժամանակ ունենա՝ դիտարկելու արդյոք մատակարարը բավարարում է մասնակցության պայմաններին:

Պատվիրատուի որոշումների մասին տեղեկատվություն

14. Պատվիրատուն գնմանը մասնակցելու հայտ ներկայացրած կամ բազմակի օգտագործման ցուցակում ներառվելու համար դիմած ցանակագրած մատակարարին անհապաղ տեղեկացնում է հայտի կամ դիմումի առնչությամբ պատվիրատուի որոշման մասին:

15. Երբ պատվիրատուն մերժում է մատակարարի գնմանը մասնակցելու հայտը կամ բազմակի օգտագործման ցուցակում ներառվելու համար դիմումը, դատարան է ընդունել մատակարարին որպես որակավորված կամ համում է մատակարարին բազմակի օգտագործման ցուցակից, պատվիրատուն պետք է անհապաղ մատակարարին տեղեկացնի և մատակարարի դիմումի էիման վրա, գրավոր բացատրություն տրամադրի իր որոշման պատճառների մասին:

Հոդված X Տեխնիկական բնութագրեր և մրցառի փաստաթղթեր

Տեխնիկական բնութագրեր

1. Պատվիրատուն չպետք է նշակի, ընդունի կամ կիրառի որևէ տեխնիկական բնութագիր կամ սահմանի որևէ համապատասխանության գնահատման ընթացակարգ՝ միջազգային առևտրին անհարկի խոչընդոտներ ստեղծելու նպատակով կամ ազդեցություն բարձր:

2. Գնվելիք ապրանքների կամ ծառայությունների համար տեխնիկական բնութագրեր սահմանելիս, պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, պետք է.

ա. սահմանի տեխնիկական բնութագրերը կատարողականի և գործառնական պահանջների առումով և ոչ թե ինժեներական կամ նկարագրական հատկանիշների առումով, և

բ. էինմվի տեխնիկական բնութագրերի միջազգային չափանիշների վրա, երբ այդպիսիք կան, հակառակ դեպքում՝ ազգային տեխնիկական կանոնակարգերի, ընդունված ազգային չափորոշիչների կամ շինարարական նորմերի վրա:

3. Երբ տեխնիկական բնութագրերում օգտագործվում են ինժեներական կամ նկարագրական հատկանիշներ, պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, պետք է նշի, որ նա կդիտարկի համարժեք ապրանքների կամ ծառայությունների մրցութային առա-

չարկները, որոնք ակնհայտորեն բավարարում են գնման պահանջներին՝ ներառելով մրցադրի փաստաթղթերում այնպիսի բառեր, ինչպես՝ «կամ համարժեք» բառերը:

4. Պատվիրատուն չպետք է սահմանի այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք պահանջում կամ հղում են տալիս որոշակի ապրանքային մշակման կամ ատևորային անփանձանը, արտոնագրին, հեղինակային իրավունքին, դիզայնին, տեսակին, հատուկ ծագմանը, արտադրողին կամ մատակարարին, եթե միայն չկա մեկ այլ բավարար չափով ճշգրիտ կամ դյուրընթանելի մեթոդ գնման պահանջները նկարագրելու համար և պայմանով, որ նման դեպքերում, կազմակերպությունը ներառում է «կամ համարժեք» բառերը մրցադրի փաստաթղթերում:

5. Ցանկացած տեխնիկական բնութագրի մշակման կամ ընդունման ժամանակ պատվիրատուն չպետք է փնտրի կամ ընդունի, այնպիսի եղանակով, որը կարող է մրցակցությանը խոչընդոտող ազդեցություն ունենալ, խտրուրդ այնպիսի անմիջ, որը կարող է ատևորային շահ ունենալ գնումներում:

6. Առավել փաստության համար, Կողմը, այդ թվում՝ իր պատվիրատուն, կարող են ստյն Հողփածի համաձայն մշակել, ընդունել կամ կիրառել տեխնիկական բնութագրեր՝ բնական ռեսուրսների պահպանումը կամ չորակա միջավայրի պաշտպանությունը խրախուսելու համար:

Մրցադրի գնորդերից փաստաթղթեր

7. Պատվիրատուն պետք է հասանելի դարձնի մատակարարի համար մրցադրի փաստաթղթերը, որոնք ներառում են բոլոր այն անհրաժեշտ տեղեկատվությունը, որը մատակարարին հնարավորություն է ընձեռում մշակել և ներկայացնել ընդունելի հայտեր: Եթե նախատեսված գնման ծանուցման մեջ արդեն իսկ սահմանված չէ, նման փաստաթղթերը պետք է ներառեն հետևյալի ամբողջական նկարագրությունը.

ա. գնումը, այդ թվում՝ գնվելից ապրանքների կամ ծառայությունների բնույթն ու քանակը, իսկ եթե քանակը հայտնի չէ, ապա գնահատված քանակը և ցանկացած պահանջ, որը պետք է բավարարել, այդ թվում՝ ցանկացած տեխնիկական առանձնահատկություններ, գնահատման համապատասխանության հավաստագրում, պլաններ, մախագծեր կամ ուղեցուցային մյուսեր,

բ. մատակարարների մասնակցության համար ցանկացած պայմաններ, այդ թվում՝ տեղեկատվության և փաստաթղթերի ցանկ, որոնք մատակարարներից պահանջվում է ներկայացնել մասնակցության պայմանների ամօշուրքամբ,

գ. բոլոր գնահատման չափանիշները, որոնք կազմակերպությունը կիրառելու է պայմանագրեր կնքելու համար, և, բացառությամբ այն դեպքի, երբ գինը միակ չափանիշն է, նման չափանիշի համեմատական կարևորությունը,

դ. եթե պատվիրատուն գնումն իրականացնելու է էլեկտրոնային եղանակով, ապա նույնականացման և կողակորման պահանջները կամ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ներկայացման հետ կապված ցանկացած այլ պահանջներ,

ե. եթե պատվիրատուն իրականացնելու է էլեկտրոնային աճուրդ, այն կանոնները, որոնցով աճուրդն անցկացվելու է, այդ թվում՝ գնահատման չափանիշներին առչվող մրցույթի հայտերի տարրերի նույնացումը,

զ. եթե լինելու է մրցույթի հայտերի հրատարակային բացում, ապա բացման ամսա-

բիզն, ժամը և վայրը, և, անհրաժեշտության դեպքում, նաև ներկա գտնվելու իրավասություն ունեցող անձինք,

Լ. այլ ցանկացած դրույթներ կամ պայմաններ, այդ թվում՝ վճարման պայմանները և մրցույթի հայտեր ներկայացնելու միջոցների սահմանափակումները, ինչպես օրինակ բղբային կամ կելեփոմային եղանակով, և

Ջ. ցանկացած անտարիվ ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման համար:

8. Գնվելիք ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման համար ցանկացած ամսաթիվ սահմանելիս՝ պատճիրատուն պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ գնման բարդությունը, ենթադրված ենթապայմանագրերի չափը և իրատեսական ժամկետը, որը պահանջվում է ապրանքների արտադրության, մատակարարման կետից դեպքը վերապահեստավորելու և տեղափոխելու կամ ծառայությունների մատուցման համար:

9. Նախատեսված գնման ծանուցման կամ մրցադրի փաստաթղթերում սահմանված գնահատման չափանիշները, ի թիվս այլոց, կարող են ներառել գնային և ծախսային այլ գործոններ, որակը, տեխնիկական արժեքը, քննապահպանական քննադրերը և առաքման պայմանները:

10. Պատվիրատուն պետք է անհավաղ.

ա. հասանելի դարձնի մրցադրի փաստաթղթերը՝ ազատելից համար, որ ենտարրրկված մատակարարները բավարար ժամանակ ունենան ընդունելի հայտեր ներկայացնելու համար,

բ. ըստ դիմումի, տրամադրի մրցադրի փաստաթղթեր ցանկացած ենտարրրկված մատակարարի, և

գ. պատասխանի ցանկացած ենտարրրկված կամ մասնակից մատակարարի կողմից առաջված հանուպատասխան տեղեկատվություն տրամադրելու ցանկացած ողջամիտ դիմումի, պայմանով, որ նման տեղեկատվությունը տվյալ մատակարարին այլ մատակարարների նկատմամբ առավելություն չի տալիս:

Փոփոխություններ

11. Այն դեպքում, երբ նախքան պայմանագրի կնքումը, պատվիրատուն փոփոխում է մասնակից մատակարարներին տրամադրված նախատեսված գնման ծանուցման կամ մրցադրի փաստաթղթերում սահմանված չափանիշները կամ պահանջները, կամ լրացնում կամ վերահիտադարակում է ծանուցումը կամ մրցադրի փաստաթղթերը, նա պետք է թուր նման փոփոխությունները կամ լրացումները կամ վերահիտադարակված ծանուցումը կամ մրցադրային փաստաթղթերը գրավոր ձևով տրամադրի.

ա. բոլոր այն մատակարարներին, որոնք մասնակցում են փոփոխության, լրացման կամ վերահիտադարակման պահին, երբ նման մատակարարները հայտնի են մաքնվիմ, իսկ մնացած թուր դեպքերում, նույն ձևով, ինչպես, որ հասանելի է դարձել սկզբնական տեղեկատվությունը, և

բ. համարժեք ժամանակ տրամադրել նման մատակարարներին, անհրաժեշտության դեպքում, փոփոխելու և կրկին ներկայացնելու փոփոխված հայտերը:

Ընդհանուր դրույթներ

1. Պատվիրատուն, իր ողջամիտ կարիքների հետ համատեղելի ձևով, պետք է մատակարարեներին տրամադրի բավարար ժամանակ մասնակցությանը պատրաստվելու և ընդունելի մրցութային հայտեր ներկայացնելու համար, հաշվի առնելով հետևյալ գործոնները.

ա. գնման բնույթն ու բարդությունը,

բ. ենթադրվող ենթապայմանագրերի չափը, և

գ. անհրաժեշտ ժամանակը ոչ էլեկտրոնային տարբերակով, որտեղ էլեկտրոնային եղանակներ չեն օգտագործվում, մրցութային հայտերը արտաքին, ինչպես նաև ներքին կետերից փոխանցելու համար:

Նման ժամկետները, այդ բովանդակում՝ ժամկետների երկարածությունը, պետք է նույնը լինի քոչքը հետաքրքրված կամ մասնակից մատակարարների համար:

Վերջնաժամկետներ

2. Ընտրանքային մրցույթներ կիրառող պատվիրատուն պետք է սահմանի, որ մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը սկզբունքորեն չպետք է լինի 25 օրից պակաս՝ հաշվելով նախատեսված գնման ծանուցման հրատարակման ամսաբվից: Եթե պատվիրատուի կողմից պատշաճորեն հիմնավորված հրատապության համազմանքից ելնելով՝ տվյալ ժամկետի պահպանումը դասնում է անհնար, ապա ժամկետը կարող է նվազեցվել մինչև 10 օր:

3. Եթե այլ բան նախատեսված չէ 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերում, ապա պատվիրատուն պետք է սահմանի, որ մրցութային հայտերի ներկայացման վերջնաժամկետը չպետք է լինի 40 օրից պակաս՝ հաշվված այն օրվանից, երբ.

ա. բաց մրցույթի դեպքում՝ նախատեսված գնման ծանուցումը հրատարակվում է, կամ

բ. ընտրանքային մրցույթի դեպքում՝ մարմինը մատակարարներին ծանուցում է, որ նրանք կիրառվեն ներկայացնելու մրցույթի հայտեր՝ անկախ այն փաստից՝ նա կիրառում է բազմակի օգտագործման ցուցակ, թե ոչ:

4. Պատվիրատուն կարող է նվազեցնել 3-րդ կետի համաձայն սահմանված մրցույթի ժամկետը՝ ոչ ավելի, քան 10 օրով, եթե.

ա. պատվիրատուն VII Հոդվածի 4-րդ կետի համաձայն հրատարակել է պլանավորված գնման ծանուցումը նախատեսված գնման ծանուցումից առնվազն 40 օր բայց ոչ ավել, քան 12 ամիս առաջ, իսկ պլանավորված գնման ծանուցումը պարունակում է.

i. գնման նկարագրությունը,

ii. մրցութային հայտերի կամ մասնակցության դիմումների ներկայացման մտավոր վերջնաժամկետը,

iii. հայտարարություն, որ հետաքրքրված մատակարարները գնման առնչությամբ իրենց հետաքրքրությունը պետք է արտահայտեն պատվիրատուին,

iv. հասցեն, որտեղից գնմանն առնչվող փաստաթղթերը կարող են ձեռք բերվել, և

v. առավելագույն տեղեկատվությունը, որը պահանջվում է VII Հոդվածի 2-րդ կետի համաձայն նախատեսված գնման ծանուցման համար, որքանով որ հասանելի է,

բ. կրկնվող պայմանագրերի համար պատվիրատուն նախատեսված գնման նախ-
նական ծանուցման մեջ նշում է, որ հաջորդող ծանուցումները կարածադրեն մրցույթի
ժամկետները՝ էլնելով սույն կետից, կամ

գ. պատվիրատուի կողմից պատշաճորեն իրմնավորված հրատարակության հանգա-
մանը մրցույթի համար 3-րդ կետի համաձայն սահմանված ժամկետի պահպանումը
դարձնում է անհնարին:

5. Պատվիրատուն կարող է կրճատել մրցույթի համար 3-րդ կետի համաձայն սահ-
մանված ժամկետը հինգ օրով հետևյալ համգամանքներից յուրաքանչյուրի համար՝

ա. նախատեսված գնման ծանուցումը հրատարակված է էլեկտրոնային եղանա-
կով,

բ. բոլոր մրցադրման փաստաթղթերը հասանելի են էլեկտրոնային եղանակով՝ նա-
խատեսված գնման ծանուցման հրատարակման օրվանից, և

գ. մարմինն ընդունում է մրցույթի հայտերը էլեկտրոնային եղանակով:

6. 5-րդ կետի կիրառումը 4-րդ կետի հետ համատեղ ոչ մի դեպքում չպետք է հան-
գեցնի 3-րդ կետի համաձայն սահմանված մրցույթի հայտերի ներկայացման ժամկետի
կրճատմանը ավելի քան մինչև 10 օր՝ հաշվված նախատեսված գնման ծանուցման հրա-
պարակման օրվանից:

7. Անկախ սույն Հոդվածի որևէ այլ դրույթից, եթե պատվիրատուն գնում է առևտրա-
յին ապրանքներ կամ ծառայություններ, կամ դրանց այլ համակցություն, նա կարող է
նվազեցնել 3-րդ կետի համաձայն սահմանված մրցույթի հայտերի ներկայացման ժամ-
կետը նվազագույնը մինչև 13 օր, պայմանով, որ նա միաժամանակ հրատարակում է է-
լեկտրոնային եղանակով և նախատեսված գնման ծանուցումը և մրցադրի փաստա-
թղթերը: Ի լրումն, եթե մարմինը ընդունում է առևտրային ապրանքների կամ ծառայու-
թյունների համար մրցույթի հայտերը էլեկտրոնային եղանակով, այն կարող է 3-րդ կետի
համաձայն սահմանված ժամկետը կրճատել ոչ պակաս, քան մինչև 10 օրը:

8. Եթե 2-րդ կամ 3-րդ Ադդիթիվում սահմանված պատվիրատուն ընտրել է բոլոր
կամ սահմանափակ թվով որակավորված մատակարարներին, մրցույթի հայտերի ներ-
կայացման ժամկետը կարող է ֆիքսվել պատվիրատուի և ընտրված մատակարարների
փոխտնամայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում, ժամանակա-
հատվածը չպետք է լինի 10 օրից պակաս:

Հոդված XII Բանակցություններ

1. Կողմը կարող է իր պատվիրատուների համար նախատեսել բանակցությունների
անցկացում.

ա. եթե մարմինը նախատեսված գնման ծանուցման մեջ, VII Հոդվածի 2-րդ կետի
համաձայն, նշել է բանակցություններ անցկացնելու իր մտադրության մասին, կամ

բ. եթե, նախատեսված գնման ծանուցման և մրցադրի փաստաթղթերում սահման-
ված հատուկ գնահատման չափանիշների հիման վրա գնահատումից պարզ է դառնում,
որ հայտերից և ոչ մեկը ակնհայտորեն առավել չէ:

2. Պատվիրատուն պետք է.

ա. ապահովի, որ բանակցություններին մասնակցող մատակարարների բանակցություններից դուրս հանելը իրականացվի նախատեսված գնման ծանուցման և մրցադրի փաստաթղթերում սահմանված հատուկ գնահատման չափանիշների համաձայն, և

բ. կրթ բանակցություններն ազարտվում են, ընդհանուր վերջնաժամկետ սահմանի մնացած մասնակից մատակարարների համար նոր կամ վերանայված մրցույթի հայտեր ներկայացնելու նպատակով:

Չորրորդ XIII Ասիմանափակ մրցութային հայտեր

1. Պայմանով, որ պատվիրատուն չի կիրառում սույն դրույթը մատակարարների միջև մրցակցությունից խտասփելու համար կամ այնպիսի ձևով, որ խտրականություն է դնում որևէ այլ կողմի մատակարարների նկատմամբ կամ պաշտպանում է տեղական մատակարարներին, պատվիրատուն կարող է կիրառել ասիմանափակ մրցադր և կարող է ընտրել չկիրառել VII-ից IX-ը, X (7-ից 11 կետեր), XI, XII, XIV և XV Հոդվածները՝ միայն հետևյալ հանգամանքներից որևէ մեկի դեպքում.

ա. երբ.

i. չի ներկայացվել ոչ մի մրցույթի հայտ կամ մատակարարի կողմից մասնակցության դիմում,

ii. չի ներկայացվել մրցադրի փաստաթղթերի եսկան պահանջներին համապատասխանող ոչ մի մրցույթի հայտ,

iii. ոչ մի մատակարարի կողմից չեն բազարաբվել մասնակցության պայմանները, կամ

iv. ներկայացված մրցույթի հայտերը եղել են պայմանավորված, պայմանով, որ մրցադրի փաստաթղթերի պահանջները եսկանորեն փոփոխված չեն,

բ. երբ ապրանքներն ու ծառայությունները կարող են մատակարարվել միայն կոնկրետ մատակարարի կողմից, և չկա այլ ողջամիտ աչքնուրանք կամ փոխարինող ապրանքներ կամ ծառայություններ գոյություն չունեն հետևյալ պատճառներից որևէ մեկով.

i. պահանջը արվեստի գործի համար է ներկայացված,

ii. արտոնագրերի, եռփնակային իրավունքի կամ այլ բացառիկ իրավունքների պաշտպանություն, կամ

iii. տեխնիկական պատճառներից եզնելով մրցակցություն չկա,

գ. ապրանքների կամ ծառայությունների սկզբնական մատակարարի կողմից հավելյալ մատակարարումների համար, որոնք ընդգրկված չեն եղել նախնական գնման մեջ, երբ մատակարարի փոփոխությունը նման հավելյալ ապրանքների կամ ծառայությունների համար.

i. չի կարող իրականացվել տնտեսական կամ տեխնիկական պատճառներով՝ ինչպիսիք են՝ սկզբնական գնման շրջանակում ձեռք բերված անկա առքադրումների, ծրագրային ապահովման, ծառայությունների կամ կատայցների միջև փոխարինելիության կամ փոխգործունեության պահանջները, և

ii. պատվիրատուի համար կարող է հանգեցնել զգալի անհարմարության կամ ծախսերի էական կրկնապատկման,

դ. խիստ անհրաժեշտության դեպքում, երբ պատվիրատուի կողմից անկանխատեսելի իրադարձություններից առաջացած ծախսերից հրատապության պատճառով ապրանքներն ու ծառայությունները չլին կարող ժամանակին ձեռք բերվել բաց կամ ընտրովի մրցութային ընթացակարգերի միջոցով,

ե. ապրանքային շուկայում գնված ապրանքների համար,

զ. երբ պատվիրատուն գնում է նախատիպեր կամ առաջին ապրանք կամ ծառայություն, որոնք մշակվել են նրա խնդրանքով, հետազոտության, փորձի, ուսումնասիրության կամ քաջատիկ մշակման համար հատուկ պայմանագրի կատարման ընթացքում և այդ պայմանագրի համար: Առաջին ապրանքի կամ ծառայության քաջատիկ մշակումը կարող է ներառել սահմանափակ արտադրություն կամ մատակարարում՝ պրակտիկ փորձարկման արդյունքները ընդգրկելու նպատակով և ցույց տալու համար, որ ապրանքը կամ ծառայությունը ցանկալի է արտադրության կամ մատակարարման համար՝ որակի ստանդարտներին համապատասխան քանակով, քայքայի ներառում քանակական արտադրություն կամ մատակարարում՝ նպատակ ունենալով՝ ապահովել առևտրային կենտրոնակոորթուն կամ ծածկել հետազոտական և մշակման ծախսերը,

է. քաջատիկ շահափետ պայմաններով կատարված գնումների համար, որոնք ծագում են միայն շատ կարճ ժամանակահատվածում, ոչ սովորական գործընթացներից, ինչպիսիք են՝ օրինակ լրծարման, դատական վարչարարությունից կամ սմանկությունից բխող օտարումների դեպքում, քայքայ ոչ կանոնավոր մատակարարներից սովորական գնումների դեպքում, կամ

զ. երբ պայմանագիր է կնքվում նախագծի մրցույթի հաջողի հետ, պայմանով, որ,

i. մրցույթը կազմակերպված է եղել սույն Համաձայնագրի սկզբունքներին համապատասխան ձևով, ժամանկորապես նախատեսված գնման ծանուցման հրապարակման մասով, և

ii. մասնակիցները գնահատվում են անկախ մրցութային համձնաժողովի կողմից՝ նպատակ ունենալով պայմանագիր կնքել հաջողի հետ:

2. Պատվիրատուն պետք է պատրաստի գրավոր հաշվետվություն 1-ին կետի համաձայն կնքված յուրաքանչյուր պայմանագրի վերաբերյալ: Հաշվետվությունը պետք է ներառի պատվիրատուի անունը, գնված ապրանքների կամ ծառայությունների արժեքն ու տեսակը և հայտարարություն 1-ին կետում նկարագրված այն հանգամանքների ու պայմանների նշումով, որոնցով հիմնավորվում է սահմանափակ մրցույթի կիրառմամբ:

Պողված XIV էլեկտրոնային աճուրդներ

1. Երբ պատվիրատուն նախատեսում է իրականացնել նշված գնումը էլեկտրոնային աճուրդի միջոցով, մարմինը, նախքան էլեկտրոնային աճուրդը սկսելը, պետք է յուրաքանչյուր մասնակցին տրամադրի.

ա. ափտմատ գնահատման մեթոդ, այդ բովում՝ մաթեմատիկական բանաձև, որը հիմնված է մրցադրային փաստաթղթերում սահմանված գնահատման չափանիշի վրա,

և, որը կօգտագործվի ավտոմատ դասակարգման կամ վերադասակարգման համար աճուրդի ընթացքում,

բ. իր մրցատրի տարրերի ցանկացած մախմակում՝ գնահատման արդյունքների, երե պայմանագիրը կնքվելու է առավել բարենպաստ մրցատրի հայտի հիման վրա, և

գ. ցանկացած այլ համապատասխան տեղեկատվությամ, որն ամփոփում է աճուրդի վարձանը:

Ֆողված XV Մրցույթի հայտերի մշակում և պայմանագրերի կնքում

Մրցույթի հայտերի մշակում

1. Պատվիրատուն մրցույթի բոլոր հայտերը պետք է ստանա, բացի և մշակի այն-պիսի ընթացակարգերով, որոնք երաշխավորում են գնման գործընթացի արդարությունն ու անկողմնակալությունը և մրցույթի հայտերի գաղտնիությունը:

2. Պատվիրատուն չպետք է ստուգանի որևէ մատակարարի, որի հայտը ստացվել է մրցույթի հայտերի ստացման ժամկետից հետո, երե ուշացումը պայմանավորված է բացառապես պատվիրատուի սխալով:

3. Երե պատվիրատուն հնարավորություն է ընձեռում մատակարարին ուղղել պատահական սխալները մրցույթի հայտերի բացման և պայմանագրերի կնքման միջև, պատվիրատուն պետք է նույն հնարավորությունն ընձեռի բոլոր մասնակից մատակարարներին:

Պայմանագրերի կնքում

4. Որպեսզի դիտարկվի պայմանագրի կնքման համար՝ հայտը պետք է ներկայացվի գրավոր և բացման ժամանակ պետք է համապատասխանի ծանուցումներում և մրցութային փաստաթղթերում սահմանված էական պահանջներին և ստացված լինի այն մատակարարից, որը բավարարում է մասնակցության պայմանները:

5. Թացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն որոշում է, որ պայմանագրի կնքումը չի բխում հանրային շահերից, մարմինը պետք է պայմանագիր կնքի այն մատակարարի հետ, որին մարմինը որոշել է, որ այն ունակ է կատարելու պայմանագրի պայմանները և որը, հիմնվելով միմիայն ծանուցումներում և մրցութային փաստաթղթերում նշված գնահատման չափանիշների վրա, ներկայացրել է.

ա. Անճնաչառ առավելություն ունեցող մրցութային հայտը, կամ

բ. անճնացածը գինը, երբ գինը միակ չափանիշն է:

6. Երե պատվիրատուն ստանում է հայտ այնպիսի գնով, որն անսովոր ցածր է, քան այլ հայտերում ներկայացված գները, նա կարող է ստուգել մատակարարին արդյոք վերջինս բավարարում է մասնակցության պայմաններին և կարող է կատարել պայմանագրի պայմանները:

7. Պատվիրատուն չպետք է կիրառի տարբերակներ, չեղյալ համարի գնումը կամ փոփոխի կնքված պայմանագրերը այնպես, որ չըջանցի սույն Համաձայնագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները:

Մատակարարներին տրամադրվող տեղեկատվություն

1. «Գատվիրատուն ամհապաղ տեղեկացնում է մասնակից մատակարարներին կազմակերպության՝ պայմանագրի կնքման որոշման մասին, և, մատակարարի դիմումի հիման վրա, պետք է դա անի գրավոր: XVII Հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն, պատվիրատուն պետք է, դիմումի հիման վրա, չհաղթած մատակարարին տրամադրի բացատրություն այն պատճառների մասին, թե ինչու մարմինը չի ընտրել նրա հայտը և որոնք են հաղթող մատակարարի հայտի հարաբերական առավելությունները:

Տեղեկատվության հրապարակում պայմանագրի կնքման վերաբերյալ

2. Սույն Համաձայնագրի շրջանակներում յուրաքանչյուր պայմանագրի կնքումից ոչ ուշ, քան 72 օր հետո, պատվիրատուն պետք է հրապարակի ծանուցում համապատասխան բոլորային կամ էլեկտրոնային եղանակով՝ Թվարկված III Հավելվածում: Եթե մարմինը ծանուցումը հրապարակում է միայն էլեկտրոնային եղանակով, ապա տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ողջամիտ ժամանակահատվածում:

Ծանուցումը ներառում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

ա. գնված ապրանքների կամ ծառայությունների նկարագրությունը,

բ. պատվիրատուի անունն ու հասցեն,

գ. հաղթող մատակարարի անունն ու հասցեն,

դ. հաջողված հայտի արժեքը կամ ամենաարժր և ամենացածր առաջարկները, որոնք հաշվի են առնվել կոնկրետ պայմանագրի կնքման ժամանակ,

ե. պայմանագրի կնքման ամսաթիվը, և

զ. գնման կիրառված մեթոդի տեսակը և, եթե XIII Հոդվածին համապատասխան սահմանափակ մրցույթ է իրականացվել, սահմանափակ մրցույթի կիրառումը արդարացնող հանգամանքների նկարագրությունը:

Փաստաթղթերի վարումը, հաշվետվություններ և էլեկտրոնային հետազօնվություն

3. Յուրաքանչյուր պատվիրատու, պետք է, պայմանագիրը կնքելու օրվանից առնվազն երեք տարի ժամկետով, պահպանի.

ա. մրցութային ընթացակարգերի փաստաթղթերը և հաշվետվությունները և նշված՝ գնման առնչությամբ կնքված պայմանագրերը, այդ թվում՝ XIII Հոդվածով պահանջվող հաշվետվությունները, և

բ. տվյալներ, որոնք ապահովում են նշված գնման իրականացման հետազօնվությունը էլեկտրոնային եղանակով:

Վիճակագրության վարում և հաշվետվությունների ներկայացում

4. Յուրաքանչյուր կողմ պետք է վարի սույն Համաձայնագրի շրջանակներում պայ-

ճանազորի վերաբերյալ վիճակագրություն և հաշվետվություն ներկայացնի՝ Կոմիտեին: Յուրաքանչյուր հաշվետվություն պետք է լինի մեկ տարվա կտրվածքով և ներկայացվի հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո երկու տարվա ընթացքում և պարունակի հետևյալը.

ա. 1-ին Առիթով սահմանված պատվիրատուների համար.

1. բոլոր նման մարմինների համար սույն Համաձայնագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերի քանակը և ընդհանուր արժեքը,

ii. յուրաքանչյուր նման կազմակերպության կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերի քանակը և ընդհանուր արժեքը՝ դասակարգված ապրանքների և ծառայությունների կատեգորիաներով՝ միջազգայնորեն ճանաչված միասնական դասակարգման համակարգի համաձայն, և

iii. յուրաքանչյուր նման կազմակերպության կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում սահմանափակ ճրջույթներով կնքված բոլոր պայմանագրերի քանակը և ընդհանուր արժեքը,

բ. 2-րդ և 3-րդ Առիթիներով սահմանված պատվիրատուների համար՝ Առիթով դասակարգված յուրաքանչյուր նման կազմակերպության կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերի քանակը և ընդհանուր արժեքը, և

գ. (ա) և (բ) ենթակետերով պահանջվող տվյալների գնահատականը՝ գնահատականները մշակելու համար օգտագործված մեթոդաբանության բացատրությամբ, եթե հնարավոր չէ տրամադրել այլ տվյալները:

5. Եթե Կողմը պաշտոնական կայքում 4-րդ կետի պահանջներին համապատասխանող ձևով հրատարակում է իր վիճակագրության տվյալները, Կողմը կարող է 4-րդ կետի համաձայն տվյալները ներկայացնելու փոխարեն Կոմիտեին ուղարկել ծանուցում կայքի հասցեով՝ այլ վիճակագրության հասանելիության և օգտագործման համար անհրաժեշտ բոլոր ցուցումներով:

6. Եթե, Կողմը պահանջում է, որպեսզի կնքված պայմանագրերին առնչվող ծանուցումները 2-րդ կետի համաձայն հրատարակվեն էլեկտրոնային եղանակով և, եթե նման ծանուցումները հանրությանը հասանելի են միակ տվյալների բազայում՝ կոմերստ պայմանագրերի վերլուծությունը բույրացրող ձևով, Կողմը կարող է 4-րդ կետի համաձայն տվյալները ներկայացնելու փոխարեն Կոմիտեին ուղարկել ծանուցում կայքի հասցեով՝ այլ վիճակագրության հասանելիության և օգտագործման համար անհրաժեշտ բոլոր ցուցումներով:

Դոդված XVII Տեղեկատվության բացահայտում

Կողմերին տեղեկատվության տրամադրում

1. Ցանկացած այլ Կողմի խնդրանքով, Կողմը պետք է անհապաղ տրամադրի ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն որոշելու համար, թե արդյոք գնումն իրականացվել է արդար, անկողմնակալ ձևով և սույն Համաձայնագրի համաձայն, ներառյալ՝ տեղեկատվություն հաջողված տեներելի բնորոշիչների և հարաբերական առա-

վերաբյուրանքի մասին: Այն դեպքում, եթե տեղեկատվության տրամադրումը, կվճարի մրցակցությանը ապագա մրցույթում, Կողմը, որ ստանում է տեղեկատվությունը չպետք է այն բացահայտի որևէ մատակարարի, բացառությամբ, տեղեկատվությունը տրամադրած Կողմի հետ խորհրդակցելուց և վերջինիս համաձայնությունը ստանալուց հետո:

Տեղեկատվության չբացահայտում

2. Անկախ սույն Համաձայնագրի որևէ այլ դրույթի, Կողմը, այդ թվում՝ նրա պատվիրատուները, չպետք է որևէ հատուկ մատակարարի տրամադրեն այնպիսի տեղեկատվություն, որը կարող է վնասել մատակարարների միջև արդար մրցակցությանը:

3. Ոչինչ սույն Համաձայնագրում չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող Կողմին, այդ թվում՝ նրա պատվիրատուներին, լիազոր մարմիններին և վերանայող մարմիններին՝ բացահայտելու գաղտնի տեղեկատվության, եթե նման բացահայտումը.

ա. կարող է խոչընդոտել օրենքի կիրառմանը,

բ. կարող է վնասել մատակարարների միջև արդար մրցակցությանը,

գ. կարող է վնասել որոշակի անձանց օրինական առևտրային շահերը, այդ թվում՝ մտավոր սեփականության պաշտպանությունը, կամ

դ. այլ ձևով կարող է հակասակ լինել հանրային շահերին:

Պողված XVIII Լերպետական քննության ընթացակարգերը

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի ժամանակին, արդյունավետ, բաժանցիկ և անխորական վարչական կամ դատական քննության ընթացակարգ, որի միջոցով մատակարարը կարող է վիճարկել.

ա. Համաձայնագրի խախտումը, կամ

բ. Կողմի կողմից սույն Համաձայնագրի իրականացման համար ձեռնարկված միջոցների չպահպանումը, եթե մատակարարը իրավունք չունի վիճարկել ուղղակիորեն Համաձայնագրի խախտումը համաձայն Կողմի ներպետական օրենսդրության,

եղևելով նշված գնման համատեքստից, որի առնչությամբ մատակարարը շահ ունի կամ ունեցել է: Բոլոր վիճարկումների համար ընթացակարգային կանոնները պետք է սահմանվեն զրավոր և լինեն ընդհանուր առմամբ, հասանելի:

2. Եթե մատակարարի կողմից ներկայացվում է բոլոր 1-ին կետով նշված խախտման կամ դրույթների չպահպանման համար, ելնելով նշված գնման համատեքստից, ուրի առնչությամբ մատակարարը շահ ունի կամ ունեցել է, ապա գնումն իրականացնող պատվիրատուի Կողմը պետք է քաջալիքի կազմակերպությանն ու մատակարարին գտնել հարցի լուծումը խորհրդակցությունների միջոցով: Մարմինը պետք է ապահովի ցանկացած նման բոլորի անկողմնակալ և ժամանակին քննությունը, այնպես, որ խոչընդոտի մատակարարի մասնակցությանը ընթացիկ կամ հետագա գնմանը, կամ նրա՝

վարչական կամ դատական քննության ընթացակարգով ուղղել միջոցառումների համար դիմելու իրավունքի իրականացմանը:

3. Յուրաքանչյուր մատակարարի պետք է տրամադրվի բաժնարար ժամանակահատված բողոք պատրաստելու և ներկայացնելու համար, որը ոչ մի դեպքում չպետք է լինի 10 օրից պակաս՝ հաշվված այն օրվանից, երբ մատակարարին հայտնի է դարձել կամ ողջամտորեն պետք է հայտնի դառնար բողոքի հիմքը:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է ստեղծի կամ նշանակի անվազն մեկ անկողմնակալ վարչական կամ դատական մարմին, որն անկախ է իր պատվիրատուներից, նշված գնման համատեքստում ծագած հարցով մատակարարի կողմից ներկայացված հայցը ստանալու և քննելու համար:

5. Նրե 4-րդ կետում նշված մարմնից բացի այլ մարմին նախապես քննում է հայցը, Կողմը պետք է ապահովի, որ մատակարարը կարողանա բողոքարկել սկզբնական որոշումը անկողմնակալ վարչական կամ դատական այնպիսի մարմնի առջև, որն անկախ է այն պատվիրատուից, որի գնումը խնդրո առարկա հայցն է:

6. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ դատարան չհանդիսացող քննող մարմինը կայացնի իր որոշումը, որը ենթակա է դատական քննության կամ կիրառի այնպիսի ընթացակարգեր, որոնք նախատեսում են, որ:

ա. պատվիրատուն պետք է գրավոր պատասխանի հայցին և քննող մարմնին տրամադրի բոլոր համապատասխան փաստաթղթերը,

բ. վարույթի մասնակիցները (այստեղծ՝ մասնակիցներ) պետք է իրավունք ունենան արտահայտվելու նախքան քննող մարմնի կողմից հայցի վերաբերյալ որոշում կայացնելը,

գ. մասնակիցները պետք է իրավունք ունենան ներկայացվելու և ուղեկցվելու,

դ. ամբողջ վարույթը պետք է հասանելի լինի մասնակիցների համար,

ե. մասնակիցները պետք է իրավունք ունենան դիմելու, որպեսզի վարույթը տեղի ունենա հրապարակայնորեն, և, որ վկաները կարողանան ներկայանալ, և

զ. քննող մարմինը պետք է իր որոշումները կամ առաջարկները ընդունի ժամանակին, գրավոր և պետք է ներառի յուրաքանչյուր որոշման կամ առաջարկի ընդունման հիմքերի բացատրությունը:

7. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի կամ հետևի ընթացակարգերին, որոնք նախատեսում են.

ա. արագ միջանկյալ միջոցառումներ՝ պահպանելու համար գնմանը մասնակցելու մատակարարի հնարավորությունը: Նման միջանկյալ միջոցառումները կարող են հանգեցնել գնման գործընթացի կասեցման: Ընթացակարգերը կարող են նախատեսել, որ համապատասխան շահերի, այդ թվում՝ հանրային շահերի համար գերակա անբարենպաստ հետևանքները կարող են հաշվի առնվել՝ նման միջոցառումներ կիրառելու որոշում կայացնելիս: Միայն ոչինչ չձեռնարկելու պատճառները պետք է տրամադրվեն գրավոր, և

բ. երբ քննող մարմինը որոշել է, որ տեղի է ունեցել 1-ին կետով նկարագրված խախտում կամ ձախաղում, կրած կորստի կամ վնասի համար ուղղել գործողություն կամ փոխհատուցում, որոնք կարող են սահմանափակվել մրցույթի նախապատրաստման ծախսերով կամ հայցին ամշվող ծախսերով, կամ երկուսը միասին:

Գողթան XIX Դամաձայնագրի փոփոխություններ և կիրառելիության շրջանակի ճշգրտումներ

Առաջարկված փոփոխության մասին ծանուցում

1. Կողմը կոմիտեին ծանուցում է ցանկացած առաջարկված ճշգրտման, մարմինը մի առիթից մյուս առիթում ներառելու, կազմակերպությանը առիթից հանելու կամ I Հավելվածի իր առիթներում այլ փոփոխությունների (դրանցից ցանկացածը այսուհետ՝ փոփոխություն) մասին: Փոփոխություն առաջարկող Կողմը (այսուհետ՝ փոփոխող Կողմ) պետք է ծանուցման մեջ ներառի.

ա. I Հավելվածի իր առիթներից կազմակերպությանը հանելու ցանկացած առաջարկության համար՝ կազմակերպության նկատմամբ նշված գնման առնչությամբ պետական վերահսկողությունը կամ ազդեցությունը արդյունավետ կերպով վերացվելու հիմքով իր իրավունքներն իրականացնելու, նման վերացման ապացույցը, կամ

բ. ցանկացած այլ առաջարկվող փոփոխության համար՝ տեղեկատվություն սույն Համաձայնագրի փոխադարձ արար համաձայնեցված կիրառման շրջանակի փոփոխության հավանական հետևանքների մասին:

Առարկություն ծանուցմանը

2. Ծանկացած Կողմ, որի սույն Համաձայնագրով սահմանված իրավունքները կարող են չոչափվել I-ին կետի համաձայն ծանուցված առաջարկվող փոփոխությամբ, կարող է ծանուցել Կոմիտեին առաջարկված փոփոխության վերաբերյալ ցանկացած առարկության մասին: Նման առարկությունը պետք է ներկայացվի ծանուցումը Կողմերին փոխանցելու օրվանից 45 օրվա ընթացքում, և պետք է ներկայացնի առարկության պատճառները:

Առարկության կցություններ

3. Փոփոխող Կողմը և առարկություն ներկայացնող ցանկացած Կողմ (այսուհետ՝ առարկող Կողմ) պետք է բոլոր վորձերը ձեռնարկեն լրմնելու համար առարկության հարցը խորհրդակցությունների միջոցով: Նման խորհրդակցությունների ընթացքում փոփոխող և առարկող Կողմերը պետք է դիտարկեն առաջարկված փոփոխությունը.

ա. I-ին կետի (ա) ենթակետի շրջանակներում ծանուցման դեպքում՝ 8-րդ կետի (բ) ենթակետի համաձայն ընդունված ինդիկատիվ չափանիշներին համապատասխան, որը նշում է ճշված գնման առնչությամբ կազմակերպության նկատմամբ պետական վերահսկողության կամ ազդեցության արդյունավետ վերացումը, և

բ. I-ին կետի (բ)-ի ենթակետի շրջանակներում ծանուցման դեպքում՝ 8-րդ կետի (գ) ենթակետի համաձայն ընդունված ցանկացած չափանիշներին համապատասխան, որը վերաբերում է փոխհատուցման ճշգրտումների մակարդակին, որոնք պետք է առաջարկվեն փոփոխությունների համար՝ նպատակ ունենալով պահպանել սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքների և պարտականությունների հավասարակշռությունը

և փոխադարձաբար համաձայնեցված կիրառելիության շրջանակի համեմատական մակարդակը:

Վերանայված փոփոխություն

4. Եթե փոփոխող Կողմը և ցանկացած առարկող Կողմ առարկության հարցը լուծում են խորհրդակցությունների միջոցով, և փոփոխող Կողմը վերանայում է իր առաջարկված փոփոխությունը այդ խորհրդակցությունների արդյունքում, փոփոխող Կողմը պետք է ծանուցի այդ մասին Կոմիտեին 1-ին կետի համաձայն, և ցանկացած նման վերանայված փոփոխություն ուժի մեջ է մտնում միայն սույն Հոդվածի պահանջները կատարելուց հետո:

Փոփոխությունների իրականացում

5. Առաջարկված փոփոխությունն ուժի մեջ է մտնում միայն եթր,

ա. ոչ մի Կողմ Կոմիտեին չի ներկայացնում գրավոր առարկություն առաջարկված փոփոխության նկատմամբ՝ 1-ին կետի շրջանակներում առաջարկված փոփոխության մասին ծանուցման շրջանառումից 45 օրվա ընթացքում,

բ. բոլոր առարկող Կողմերը Կոմիտեին ծանուցել են, որ համում են առաջարկված փոփոխության նկատմամբ իրենց առարկությունները, կամ

գ. 1-ին կետի շրջանակներում առաջարկված փոփոխության մասին ծանուցման շրջանառումից 150 օր է անցել, և փոփոխող Կողմը Կոմիտեին գրավոր տեղեկացրել է փոփոխությունն իրականացնելու իր մտադրության մասին:

Կիրառելիության շրջանակից Հակամոտիվ համարժեք բացառում

6. Եթր 5-րդ կետի (գ) ենթակետի համաձայն, փոփոխությունն ուժի մեջ է մտնում, ցանկացած առարկող Կողմ կարող է կիրառելիության շրջանակից կատարել հակամոտիվ համարժեք բացառում: Չնայած IV Հոդվածի 1-ին կետի (բ) ենթակետի, սույն կետի համաձայն բացառումը կարող է կիրառվել միայն փոփոխող Կողմի նկատմամբ: Ծանկացած առարկող Կողմ գրավոր պետք է տեղեկացնի Կոմիտեին ցանկացած նման բացառման մասին՝ բացառումն ուժի մեջ մտնելուց ստեղծված 30 օր առաջ: Սույն կետի համաձայն բացառումը պետք է համապատասխանի Կոմիտեի կողմից 8-րդ կետի (գ) ենթակետ համաձայն ընդունված փոխհատուցման ճշգրտումների մակարդակին ստեղծվող ցանկացած չափանիշին:

Առարկությունների հարցի լուծումը հեշտացնելուն ուղղված արբիտրաժային ընթացակարգեր

7. Եթե Կոմիտեն 8-րդ կետի համաձայն ընդունել է առարկությունների հարցի լուծումը հեշտացնելուն ուղղված արբիտրաժային ընթացակարգեր, փոփոխող կամ ցանկացած առարկող Կողմը կարող են դիմել արբիտրաժային ընթացակարգերի՝ առաջարկված փոփոխության մասին ծանուցման շրջանառումից 120 օրվա ընթացքում:

ա. երբ ոչ մի Կողմ չի դիմում արբիտրաժային ընթացակարգերի սահմանված ժամկետում.

ի. չնայած 5-րդ կետի (գ) ենթակետի, առաջարկված փոփոխությունն ուժի մեջ է մտնում, եթե 1-կետի համաձայն առաջարկվող փոփոխության մասին ծանուցումը չըջանառելուց անցել է 130 օր, և փոփոխող Կողմը զրափոր տեղեկացրել է Կոմիտեին փոփոխությունն իրականացնելու իր մտադրության մասին, և

իւ. ոչ մի առարկող Կողմ չի կաշող կատարել կիրառելիության չըջանակից բացառում՝ համաձայն 6-րդ կետի.

բ. եթե փոփոխող Կողմը կամ առարկող Կողմը դիմել են արբիտրաժային ընթացակարգերի.

է. չնայած 5-րդ կետի (գ) ենթակետի, առաջարկվող փոփոխությունն ուժի մեջ չի մտնի նախրան արբիտրաժային ընթացակարգերի ափարող.

իւ. ցանկացած առարկող Կողմ, որ մտադիր է կիրարկել փոխատուցման իրավունք կամ, 6-րդ կետի համաձայն՝ կիրառելիության չըջանակից կատարել էականորեն համարժեք բացառում, պետք է մասնակցի արբիտրաժային ընթացակարգերին,

իււ. փոփոխող Կողմը պետք է գործի՝ արբիտրաժային ընթացակարգերի արդյունքներին համապատասխան՝ 5-րդ կետի (գ) ենթակետի համաձայն ցանկացած փոփոխությունն իրականացնելիս, և

իւււ. եթե 5-րդ կետի (գ) ենթակետի համաձայն ցանկացած փոփոխությունն իրականացնելիս փոփոխող Կողմը չի գործում արբիտրաժային ընթացակարգերի արդյունքներին համապատասխան, ցանկացած առարկող Կողմ կարող է 6-րդ կետի համաձայն կատարել կիրառելիության չըջանակից էական համարժեք բացառում, պայմանով, որ ցանկացած նման բացառում համապատասխանում է արբիտրաժային ընթացակարգերի արդյունքին:

Կոմիտեի պատասխանատվությունը

8. Կոմիտեն՝ պետք է ընդունի.

ա. Արբիտրաժային ընթացակարգեր՝ 2-րդ կետի չըջանակներում առարկությունների հարցի լուծումը ղյուրացնելու նպատակով,

բ. Ինճիկատիվ չափանիշներ, որոնք ցույց են տալիս կազմակերպության նշված գնումների նկատմամբ պետական հսկողության կամ ազդեցության արդյունավետ վերացումը,

գ. Փոխատուցումային ճշգրտումների մակարդակը սահմանող չափանիշներ, որն առաջարկվում է 1-իմ կետի (բ) ենթակետի համաձայն կատարված փոփոխությունների համար և էական համարժեք կիրառելիության չըջանակը 6-րդ կետի համաձայն:

Չողված XX. Խորհրդատվություններ և վեճերի կարգավորում

1. Օտրարանյյուր Կողմ պետք է բաբոացականորեն դիտարկի սույն Համաձայնագրի գործողության նետ կապված ցանկացած հարցի առնչությանը մեկ այլ Կողմի դիմումը և համարժեք հնարավորություն ընճելի դրա վեճարեբյալ խորհրդատվությունների համար:

2. Եթե որևէ Կողմ գտնում է, որ սույն Համաձայնագրի շրջանակներում ստացվող ցանկացած ուղղակի կամ անուղղակի օգուտ չեղարկում կամ վտանգում է, կամ սույն Համաձայնագրի որևէ նպատակի իրականացումը խոչընդոտվում է հետևյալի արդյունքում.

ա. սույն Համաձայնագրի շրջանակներում այլ Կողմի կամ Կողմերի կողմից իրենց պարտավորությունների կատարման ճախարում, կամ

բ. այլ Կողմի կամ Կողմերի կողմից ցանկացած այնպիսի միջոցառման կիրառում, որը այս կամ այն կերպ խակասում է սույն Համաձայնագրի դրույթներին,

նա կարող է հարցի առնչությամբ փոխաշահավետ լուծման հասնելու համար դիմել «Վեճերի կարգավորումը կանոնակարգող կանոնների և ընթացակարգերի մասին պայմանավորվածություն» փաստաթղթին (այսուհետ՝ Վեճերը Կարգավորող պայմանավորվածություն):

3. Վեճերի Կարգավորման Պայմանավորվածությունը պետք է կիրառվի սույն Համաձայնագրի շրջանակներում խորհրդակցությունների և վեճերի կարգավորման ժամանակ, բացառությամբ, որ, անկախ Վեճերի Կարգավորման Պայմանավորվածության 22-րդ Հոդվածի 3-րդ կետի, Վեճերի Կարգավորման Պայմանավորվածության 1-ին Հավելվածում բխարկված բացի սույն Համաձայնագիրը ցանկացած այլ Համաձայնագրից ծագող ցանկացած վեճ չխանգեցնի սույն Համաձայնագրի շրջանակներում կոնցեսիաների կամ այլ պարտավորությունների կատարման, և ցանկացած վեճ, որ ծագում է սույն Համաձայնագրի շրջանակներում չխանգեցնի Վեճերի Կարգավորման Պայմանավորվածության 1-ին Հավելվածում բխարկված ցանկացած այլ համաձայնագրով կոնցեսիաների կամ այլ պարտավորությունների կատարման:

Պողված XXVI Փաստառություններ

Պետական գնումների կոմիտե

1. Պետք է հիմնադրվի Կողմերից յուրաքանչյուրի ներկայացուցիչներից կազմված Պետական գնումների կոմիտե: Այդ Կոմիտեն պետք է ընտրի իր նախագահին և պետք է ժողովներ գումարի ըստ անհրաժեշտության, բայց առնվազն տարին 1 անգամ՝ նպատակ ունենալով հնարավորություն ընձեռել Կողմերին խորհրդակցելու սույն Համաձայնագրի գործողությանը կամ դրա նպատակների իրականացմանն առնչվող ցանկացած հարցի շուրջ, ինչպես նաև Կողմերի կողմից իր վրա դրված այլ պարտականությունների իրականացման նպատակով:

2. Կոմիտեն կարող է հիմնադրել աշխատանքային խմբեր կամ այլ օժանդակ մարմիններ, որոնք կիրականացնեն Կոմիտեի կողմից հասնմաբարձրող գործառույթներ:

3. Կոմիտեն տարեկան կտրվածքով,

ա. դիտարկում է սույն Համաձայնագրի իրականացումն ու գործողությունը, և

բ. տեղեկացնում է Գլխավոր խորհրդին իր գործունեության մասին՝ համաձայն Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնադրման Մարտի 23-ի համաձայնագրի (այսուհետ՝ ԱՀԿ համաձայնագիր) IV հոդվածի 8-րդ կետի, և սույն Համաձայնագրի իրականացման և գործողության հետ կապված զարգացումների մասին:

Դիտարկման

4. Ցանկացած ԱՀԿ անդամ, որը սույն Համաձայնագրի Կողմ չէ, իրավունք կունենա որպես դիտորդ մասնակցելու Կոմիտեի աշխատանքներին՝ Կոմիտեին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: ԱՀԿ ցանկացած դիտորդ կարող է Կոմիտեի աշխատանքներին որպես դիտորդ մասնակցելու մասին գրավոր դիմում ներկայացնել Կոմիտեին և կարող է Կոմիտեի կողմից ստանալ դիտորդի կարգավիճակը:

Քողված XXII եզրակակիչ դրույթներ

Ընդունումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 1996թ. հունվարի 1-ից այն կատարությունների՝ համար, որոնց համաձայնեցված կիրառելիության շրջանակը ընդգրկվում է սույն Համաձայնագրի 1-ին Հավելվածի աղիքներում, և որոնք 1994թ. ապրիլի 15-ին ստորագրված ընդունել են Համաձայնագիրը կամ այդ նույն ամսաթվին ստորագրել են Համաձայնագիրը վավերացման պայմանով և հետագայում վավերացրել են Համաձայնագիրը մինչև 1996թ. հունվարի 1-ը:

Միանալը

2. ԱՀԿ ցանկացած անդամ կարող է միանալ սույն Համաձայնագրին՝ այդ անդամի և Կողմերի միջև համաձայնեցված պայմաններով՝ ինչպես որ այդ պայմանները սահմանված են Կոմիտեի որոշմամբ: Միանալը կատարվում է ԱՀԿ գլխավոր տնօրենին միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու միջոցով, արտահայտելով այդպիսով համաձայնեցված պայմանները: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրան միացող Անդամի համար միանալու մասին իր փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո 30-րդ օրը:

Վերադարձումները

3. Ոչ մի Կողմ չի կարող վերադարձում կատարել սույն Համաձայնագրի որևէ դրույթի կապակցությամբ:

Ազգային օրենսդրություն

4. Յուրաքանչյուր Կողմ, սույն Համաձայնագիրն իր համար ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, ապահովում է իր օրենքների, կանոնակարգերի և փարչական ընթացակարգերի, ինչպես նաև իր պատվիրատուների կողմից կիրառվող կանոնների, ընթացակարգերի և պրակտիկայի համապատասխանությունը սույն Համաձայնագրի դրույթներին:

¹ Սույն Համաձայնագրի նպատակների համար կատարության հասկացությունը պետք է հսկվանալ եվրոպական միության իրավասու խխանություններ:

5. Յուրաքանչյուր Կողմ պետք է տեղեկացնի Կոմիտեին սույն Համաձայնագրին առնչվող իր օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև այդ օրենքների և կանոնակարգերի կիրառման ցանկացած փոփոխության մասին:

Հետագա բանակցություններ և հետագա աշխատանքային ծրագրեր

6. Յուրաքանչյուր Կողմ պետք է խուսափի ընդունել կամ շարունակել կիրառել բաց գնումները խախտող խտրական միջոցներ:

7. Պետական գնումների մասին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին 2012թ. մարտի 30-ին ընդունված Արձանագրության ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 3 տարի հետո և դրանից հետո պարբերաբար, Կողմերը կնախաձեռնեն հետագա բանակցություններ՝ նպատակ ունենալով բարելավել սույն Համաձայնագիրը՝ աստիճանաբար նվազեցնելով և վերացնելով խտրական միջոցները և, բոլոր Կողմերի միջև փոխադարձության հիման վրա, հասնել դրա կիրառելիության շրջանակի հնարավոր առավելագույն ընդլայնմանը՝ հաշվի առնելով զարգացող երկրների կարիքները:

8. ա. Կոմիտեն հետագա աշխատանքներ կկատարի սույն Համաձայնագրի իրականացումը և 7-րդ կետով նախատեսված բանակցությունները դյուրացնելու համար՝ ընդունելով աշխատանքային ծրագրեր հետևյալ հարցերով՝

- i. փոքր և միջին ձեռնարկություններ,
 - ii. վիճակագրական տվյալների հավաքագրում և տարածում,
 - iii. կայուն գնումներ,
 - iv. Կողմերի առդիրներում բացառումներ և սահմանափակումներ, և
 - v. միջազգային գնումների անվտանգության ստանդարտներ.
- բ. Կոմիտեն՝

i. կարող է ընդունել որոշում, որը կներառի լրացուցիչ հարցերով աշխատանքային ծրագրերի ցանկը, որը կարող է պարբերաբար վերանայվել և համալրվել, և

ii. պետք է ընդունի որոշում, որը սահմանում է (ա) ենթակետի շրջանակում յուրաքանչյուր կոնկրետ աշխատանքային ծրագրով և (բ) «i» ենթակետով ընդունված ցանկացած աշխատանքային ծրագրով իրականացվելիք աշխատանքները:

9. Ապրանքների համար ծագման կանոնների ներդաշնակեցման ուղղությամբ աշխատանքային ծրագրի ավարտից հետո, որն իրականացվում է ԱՀԿ Համաձայնագրի 1-Ա հավելվածում նշված ծագման կանոնների մասին Համաձայնագրի շրջանակներում, և ծառայությունների առևտրի շուրջ բանակցությունների ավարտից հետո, Կողմերը հաշվի կառնեն այդ աշխատանքային ծրագրի և այդ բանակցությունների արդյունքները՝ IV Հոդվածի 5-րդ կետը փոփոխելիս, ըստ անհրաժեշտության:

10. Պետական գնումների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Արձանագրության ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 տարի հետո, Կոմիտեն պետք է վերանայի XX Հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի կիրառելիությունը:

Փոփոխություններ

11. Կողմերը կարող են փոփոխել սույն Համաձայնագիրը: Փոփոխություն կատարելու և այն ընդունելու նպատակով Կողմերին փոխանցելու որոշումը պետք է կայացվի կոնսենսուսով: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում՝

ա. բացառությամբ «ք» ենթակետով նախատեսված դեպքերի, այն Կողմերի նկատմամբ, որոնք ընդունել են այն՝ Կողմերի երկու երրորդի կողմից ընդունվելու պահից, իսկ դրանից հետո՝ յուրաքանչյուր այլ Կողմի համար՝ փոփոխությունն ընդունելու պահից,

բ. բոլոր Կողմերի համար՝ Կողմերի երկու երրորդի կողմից ընդունվելու պահից, եթե դա այնպիսի փոփոխություն է, որի վերաբերյալ Կոմիտեն, կոնսենսուսով, որոշել է որ այն իր բնույթով չի փոխում Կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Համաձայնագրից դուրս գալը

12. Ծանկացած Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից: Համաձայնագրից դուրս գալն ուժի մեջ է մտնում դուրս գալու մասին գրավոր ծանուցումը ԱՀԿ գլխավոր տնօրենի կողմից ստացվելու օրվանից 60 օր անցնելուց հետո: Նման ծանուցում ստանալուց հետո յուրաքանչյուր Կողմ կարող է պահանջել Կոմիտեի անհապաղ համեղություն:

13. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի Կողմը դադարում է լինել ԱՀԿ անդամ, նա դադարում է նաև լինել սույն Համաձայնագրի Կողմ, ինչն ուժի մեջ է մտնում ԱՀԿ անդամակցության դադարեցման օրվանից:

Կանցլերն Կողմերի միջև սույն Համաձայնագրի լիկիտացիոն

14. Սույն Համաձայնագիրը չի կիրառվի ցանկացած երկու Կողմերի միջև, եթե Կողմերից մեկը կամ մյուսը սույն Համաձայնագիրն ընդունելիս կամ դրան միանալիս չի ավել իր համաձայնությունը նման կիրառման առնչությամբ:

Հայնդիվաններ

15. Հավելվածները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Քարտուղարություն

16. Սույն Համաձայնագիրը պետք է պատարկվի ԱՀԿ քարտուղարության կողմից:

Ի պահ տալը

17. Սույն Համաձայնագիրը ի պահ է տրվում ԱՀԿ-ի գլխավոր տնօրենին, ով պետք է անհապաղ յուրաքանչյուր Կողմին փոխանցի սույն Համաձայնագրի, 19-րդ հոդվածի համաձայն դրա ճշգրտման կամ փոփոխման և 11-րդ կետի համաձայն դրա բոլոր փոփոխությունների հաստատված պատճենները, ինչպես նաև յուրաքանչյուր ծանուցում 2-րդ կետի համաձայն Համաձայնագրին միանալու և 12-րդ և 13-րդ կետերի համաձայն Համաձայնագրից դուրս գալու վերաբերյալ:

Գրանցում

18. Սույն Համաձայնագիրը պետք է գրանցվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածի դրույթների համաձայն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(նույնական է միայն անգլերեն լեզվով)

ԱՈՂԻՐ 1

Պետական կառավարման կենտրոնական մարմիններ

Շենքեր՝	
Ապրանքներ՝	ՓՀԻ 130,000
Ծառայություններ՝	ՓՀԻ 130,000
Շինարարական ծառայություններ՝	ՓՀԻ 5,000,000

Մարմինների ցանկը՝

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ
2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ
3. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմ
5. Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատ
6. Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ
7. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն
8. Հայաստանի Հանրապետության հատուկ ըննչական ծառայություն
9. Հայաստանի Հանրապետության մաքուր իրավունքների պաշտպանի գրասենյակ
10. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (իդրոմ 2)
11. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն
12. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն (իդրոմ 3)
13. Հայաստանի Հանրապետության սիլուոքի նախարարություն
14. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն
15. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն
16. Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
17. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
18. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն
19. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
20. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն
21. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
22. Հայաստանի Հանրապետության բնագնահատության նախարարություն
23. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
24. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն
25. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն
26. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն
27. Հայաստանի Հանրապետության ճշակոյցի նախարարություն
28. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

29. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն (իդր՝ 3)
30. Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության ծառայություն (իդր՝ 3)
31. Հայաստանի Հանրապետության պետական եկամտամների կոմիտե
32. ՀՀ անչարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
33. ՀՀ կառավարությանն առջին փոփոխության անվտանգության կարգավորման պետական կոմիտե
34. Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման վարչություն
35. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
36. Հայաստանի Հանրապետության ոստիկանություն (իդր՝ 3)
37. Հայաստանի փրկարար ծառայություն
38. Պետական ջրային կոմիտե
39. Գիտությունների պետական կոմիտե
40. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով
41. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողով
42. Հայաստանի Հանրապետության ազդեցական ազատության հանձնաժողով
43. Հայաստանի Հանրապետության տնտեսական նրջակցության պաշտպանության պետական հանձնաժողով
44. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ
45. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
46. Հայաստանի Հանրապետության օադիոյի և հեռուստատեսության ազգային հանձնաժողով
47. Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստատեսության և օադիոյի խորհուրդ
48. Արագածոտնի մարզպետարան
49. Արարատի մարզպետարան
50. Արմավիրի մարզպետարան
51. Գեղարքունիքի մարզպետարան
52. Լոռու մարզպետարան
53. Կոտայքի մարզպետարան
54. Շիրակի մարզպետարան
55. Սյունիքի մարզպետարան
56. Վայոց ձորի մարզպետարան
57. Տավուշի մարզպետարան

1-ին Առջիկի ծանոթագրություն

1. Սույն ցանկը վերաբերում է «Պետական գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության չքայնակում գտնվող՝ պետական կառավարման բոլոր կենտրոնական մարմիններին և ստորադաս կազմակերպություններին:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Համաձայնագիրը չի կիրառվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի այն ձեռքբերումների կամ գնումների նկատմամբ, որոնք առնչվում են պետական պարտքի՝ ներառյալ վարկե-

րի և պետական պարտատոմսերի, մարիակների և այլ արժեթղթերի վաճառքին, մարմանը և բաշխմանը:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության ծառայություն և Հայաստանի Հանրապետության ստիկանություն. Նշված մարմինների համար Համաձայնագիրը կիրառվում է միայն հետևյալ կատեգորիաների գնումների վրա, պայմանով, որ դրանք կտանձանվեն III Հոդվածի 1-ին կետով:

	ՖՄԻ համարը	Նկարագիր
1.	22.	Երկաթգծերի սարքավորումներ
2.	23.	Շարժիչային փոխադրամիջոցներ, կցանքներ (բացառությամբ 2310-ի ավտորուսների)
3.	24.	Քարչակներ
4.	25.	Փոխադրական սարքավորումների բաղադրիչներ
5.	26.	Անվազողեր և խորոփակներ
6.	29.	Շարժիչ պարագաներ
7.	30.	Մեխանիկական ենթգիայի փոխանցման սարքավորումներ
8.	32.	Փայտամշակման մեքենաներ և սարքավորումներ
9.	34.	Մետաղամշակման մեքենաներ
10.	35.	Շատայությունների և առևտրի սարքավորումներ
11.	36.	Հատուկ արդյունաբերության մեքենաներ
12.	37.	Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ
13.	38.	Շինարարական, հանքարդյունաբերության, պեղումների և խճուղու սպասարկման սարքավորումներ
14.	39.	Նյութերի բեռնման և բեռնաթափման սարքավորումներ
15.	40.	Պարան, մադոխ, չորս և կցամասեր
16.	41.	Մտոնարանային և օդորակման սարքավորումներ
17.	42.	Հրչեց, փրկարարական և անվտանգության սարքավորումներ
18.	43.	Պոմպեր և կոմպրեսորներ
19.	44.	Հնոց, գոլդըչու գնեբաստոր, չորացման սարքավորումներ և միջուկային ռեակտորներ
20.	45.	Տրմուղ, ջեռացման և կոչուղու սարքավորումներ
21.	46.	Տրի մարքման և կեղտաջրերի մշակման սարքավորումներ
22.	47.	Խողովակ, ռետին խողովակ, փողոսակ և կցամասեր
23.	48.	Փակեաններ
24.	49.	Տեխնիկական սպասարկման և վերանորոգման սարքավորում
25.	53.	Սարքավորումներ և եղկարք
26.	54.	Հաճաքովի կոնտրոլիցիաներ և փայտամած
27.	55.	Անաստանյութ, կյանմային իրեր, նրբատախտակ և կրեպատման նյութեր

28.	56.	Ըփնանյութեր և կառուցապատման նյութեր
29.	61.	Էլեկտրական լարեր, ենթգծովի և բաշխիչ սարքավորումներ
30.	62.	Լուսավորող սարքեր և լամպեր
31.	63.	Տազմապային և ազդանշանային համակարգեր
32.	65.	Բժշկական, ստամբարոժական և ամսամբարոժական սարքավորումներ և պարագաներ
33.	66.	Գործիքներ և յարթատուր սարքավորումներ
34.	67.	Լուսանկարչական սարքավորումներ
35.	68.	Ֆիմիկատներ և քիմիական արտադրանքներ
36.	69.	Ուսումնական օժանդակ միջոցներ և սարքեր
37.	70.	Ընդհանուր նպատակների ծառայող տվյալների ավտոմատ մշակման սարքավորումներ, ծրագրային ապահովման պարագաներ և օժանդակ սարքավորումներ
38.	71.	Կահույք
39.	72.	Կենցաղային և առևտրային կահավորանք և տեխնիկա
40.	73.	Սննդի պատրաստման և ճատուցման սարքավորումներ
41.	74.	Գրասենյակային սարքավորումներ, տեսագրման սարքավորումներ և տվյալների ավտոմատ մշակման սարքավորումներ
42.	75.	Գրասենյակային պարագաներ և սարքեր
43.	76.	Գրքեր, քարտեզներ և այլ հրատարակություններ
44.	77.	Երաժշտական գործիքներ, ձայնագրիչներ և ուսղիներ
45.	78.	Փամանցային և մարզական սարքավորումներ
46.	79.	Մարքան սարքավորումներ և պարագաներ
47.	80.	Խոզանակներ, ներկեր, հերմետիկ ծածկող և ստանձող նյութեր
48.	81.	Բեռնարկղեր և փաթեթավորման պարագաներ
49.	85.	Չուգարամային պարագաներ
50.	87.	Գյուղատնտեսական պարագաներ
51.	88.	Կենդանի անասուններ
52.	91.	Վառելանյութեր, քաղցներ, յուղեր և մեղրամոմ
53.	93.	Ոչ մետաղական ֆաբրիկատ նյութեր
54.	94.	Ոչ մետաղական չմշակված նյութեր
55.	96.	Հանքաքար, հանածոներ և դրանց հիմնական արդյունքները
56.	99.	այլ

ԱՌՆԻՐ 2

Ենթակենտրոնական իշխանության մարմիններ

Ընմեր	
Ապրանքներ՝	ՓՀԻ 200,000
Ծառայություններ՝	ՓՀԻ 200,000
Եինարարական ծառայություններ՝	ՓՀԻ 5,000,000

Մարմինների ցանկը

1995 թվականի նոյեմբերի 7-ի հմ. Ն-062-1 «Կարգատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետևյալ տեղական իշխանության մարմիններն են.

1. Երևանի քաղաքապետարան
2. Աշտարակի քաղաքապետարան
3. Ապարանի քաղաքապետարան
4. Թալինի քաղաքապետարան
5. Արտաշատի քաղաքապետարան
6. Արարատի քաղաքապետարան
7. Մասիսի քաղաքապետարան
8. Վեդիի քաղաքապետարան
9. Արմավիրի քաղաքապետարան
10. Վաղարշապատի քաղաքապետարան
11. Մեծամորի քաղաքապետարան
12. Գավառի քաղաքապետարան
13. Գառնի քաղաքապետարան
14. Մարտունո քաղաքապետարան
15. Սևանի քաղաքապետարան
16. Վարդենիսի քաղաքապետարան
17. Վանաձորի քաղաքապետարան
18. Ալավերդու քաղաքապետարան
19. Ախթալայի քաղաքապետարան
20. Թումանյանի քաղաքապետարան
21. Սպիտակի քաղաքապետարան
22. Ստեփանավանի քաղաքապետարան
23. Տաշիրի քաղաքապետարան
24. Հրազդանի քաղաքապետարան
25. Արովյանի քաղաքապետարան
26. Բյուրեղավանի քաղաքապետարան
27. Եղվարդի քաղաքապետարան
28. Ծաղկաձորի քաղաքապետարան
29. Նոր Հաճնի քաղաքապետարան
30. Գարեհնգավանի քաղաքապետարան
31. Գյումրու քաղաքապետարան
32. Արբիկի քաղաքապետարան

ԱՌՆԻՐ 2

Ենթակենտրոնական իշխանության մարմիններ

Ընմեր	
Ապրանքներ՝	ՓՀԻ 200,000
Ծառայություններ՝	ՓՀԻ 200,000
Եինարարական ծառայություններ՝	ՓՀԻ 5,000,000

Մարմինների ցանկը

1995 թվականի նոյեմբերի 7-ի հմ. Ն-062-1 «Կարգատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հետևյալ տեղական իշխանության մարմիններն են.

1. Երևանի քաղաքապետարան
2. Աշտարակի քաղաքապետարան
3. Ապարանի քաղաքապետարան
4. Թալինի քաղաքապետարան
5. Արտաշատի քաղաքապետարան
6. Արարատի քաղաքապետարան
7. Մասիսի քաղաքապետարան
8. Վեդիի քաղաքապետարան
9. Արմավիրի քաղաքապետարան
10. Վաղարշապատի քաղաքապետարան
11. Մեծամորի քաղաքապետարան
12. Գավառի քաղաքապետարան
13. Գառնի քաղաքապետարան
14. Մարտունու քաղաքապետարան
15. Սևանի քաղաքապետարան
16. Վարդենիսի քաղաքապետարան
17. Վանաձորի քաղաքապետարան
18. Ալավերդու քաղաքապետարան
19. Ախթալայի քաղաքապետարան
20. Թումանյանի քաղաքապետարան
21. Սպիտակի քաղաքապետարան
22. Ստեփանավանի քաղաքապետարան
23. Տաշիրի քաղաքապետարան
24. Հրազդանի քաղաքապետարան
25. Արովյանի քաղաքապետարան
26. Բյուրեղավանի քաղաքապետարան
27. Եղվարդի քաղաքապետարան
28. Ծաղկաձորի քաղաքապետարան
29. Նոր Հաճնի քաղաքապետարան
30. Գարնեցավանի քաղաքապետարան
31. Գյումրու քաղաքապետարան
32. Արբիկի քաղաքապետարան

33. Մարալիկի քաղաքապետարան
34. Կապանի քաղաքապետարան
35. Ագարակի քաղաքապետարան
36. Գորիսի քաղաքապետարան
37. Գաստակերտի քաղաքապետարան
38. Մեղրիի քաղաքապետարան
39. Սիսիանի քաղաքապետարան
40. Քաջարանի քաղաքապետարան
41. Եղեգնաձորի քաղաքապետարան
42. Ջերմուկի քաղաքապետարան
43. Վայքի քաղաքապետարան
44. Իջևանի քաղաքապետարան
45. Բերդի քաղաքապետարան
46. Դիլիջանի քաղաքապետարան
47. Նոյեմբերյանի քաղաքապետարան

ԱՌԴԻՐ 3
Այլ մարմիններ

Շենքեր՝	
Ապրանքներ՝	ՓՀԻ 400,000
Ծառայություններ՝	ՓՀԻ 400,000
Շինարարական ծառայություններ՝	ՓՀԻ 5,000,000

Մարմինների ցանկ

Հանրային օրենքով ղեկավարվող բոլոր իրավաբանական անձինք (իշխանության մարմիններ, ձեռնարկություններ և հիմնադրամներ), մասնավորապես՝

ա. Պետական կամ համայնքային ոչ առևտրային (շահույթ չհետապնդող) կազմակերպություններ.

բ. 50 տոկոսից ավելի պետական կամ համայնքային բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություններ.

գ. Հանրային ծառայություններ՝ ներառյալ կոմունալ հատվածի ընկերությունները, որոնց գնումների վրա տարածվում է գնումների մասին օրենքը:

3-րդ Առդիրի ծանոթագրություն

Հանրային օրենքով կարգավորվող իրավաբանական անձանց այս ցանկը պետք է հրատարակվի «Գնումների մասին» պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրում՝ www.procurement.am:

ԱՈՂԻՐ 4

Մարտնչներ

- Երե այլ բան սահմանված չէ, սույն Համաձայնագիրը տարածվում է 1-ից 3-րդ Առ-
ջիներում ընդգրկված մարտիների կողմից գնվող բոլոր ապրանքների վրա:

ԱՌԴԻՐ 5

Ծառայություններ

Սույն Համաձայնագիրը տարածվում է MTN.GNS/W/120 փաստաթղթում պարտավորվող Միավորված ազգերի կազմակերպության արտադրանքի նախնական կենտրոնական դասակարգչի (CPC Prov.) համաձայն սահմանված րդր ծառայությունների վրա:

ԱՌԴԻՐ 6

Շինարարական ծառայություններ

Շինարարական ծառայությունների ցանկը (CPC Prov., 51-րդ բաժին)
CPC 51-րդ բաժնում բխարկված բոլոր ծառայությունները:

ԱՌՂԻՐ 7

Ընդհանուր ծանուցազուրյուններ

Սույն ընդհանուր ծանուցազուրյունը կիրառվում է առանց բացառության սույն Համաձայնագրի նկատմամբ, ներառյալ 1-ից 6-րդ Աղյուրները.

1. Սույն Համաձայնագիրը չի կիրառվի գյուղատնտեսական ապրանքների գնման վրա, որը կատարվել է գյուղատնտեսությանն աջակցության ծրագրերին և մարդկանց աննպաստիչ օժանդակելու ծրագրերին օժանդակելու նպատակով:

**Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտնել
2015թ. հունիսի 5-ին**